

28(566)
20.09.2019

Քրտարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐ

Лусар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusar

ՏՈՆԸ ԽՐԹԱՆ` ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԸ

Արցախում նշվեց Ֆիզկուլտուրնիկի օրը

Ֆիզիկական կուլտուրայի զարգացումը մեր երկրի առաջընթացի կարևոր ուղղություններից է: Որ այդ ուղղությամբ վերաբերող խնդիրները մշտապես պետության ուշադրության կենտրոնում են, վկայում են ամեն տարի շարք մտնող մարզական օբյեկտները, ՀՀ, Եվրոպայի և աշխարհի մրցաշարերին մասնակցող արցախցի մարզիկների թիվը: Մեր հանրապետությունը ոչ միայն մարզիկներ է ուղարկում տարբեր երկրներ, այլև ինքն է կազմակերպում միջազգային մրցաշարեր: Դրա լավագույն ապացույցը հենց միայն այս ամռանը անցկացված միջազգային մարզական միջոցառումներն էին՝ չճանաչված երկրների ֆուտբոլային առաջնությունը՝ Կոնիֆան, Համահայկական խաղերը, «Մար» առանց սահմանների» մարզամշակութային միջոցառումը, պրոֆեսիոնալ բռնցքամարտի մրցաշարը: Էլ չենք թվարկում տարվա ընթացքում անցկացված միջոցառումները: Իսկ Եվրոպայի և աշխարհի արցախցի մեր չեմպիոններով արդեն վաղուց չենք զարմանում, հիանում ենք և սպասում նորանոր հաղթանակներ միջազգային մրցախաղերում: Սրանք լավագույն ցուցանիշներ են, որոնցով մեր երկիրը ներկայանում է աշխարհին, մեծացնում իր ճանաչելիության հնարավորությունները:

Րոնդ հաջողությունների հիմքը ֆիզիկական և հոգեպես մարդկային առողջ ներուժն է: Մարզական մեծ հաջողություններն էլ սկսվում են դպրոցից: Շատ չեն պիտաներ իրենց առաջին քայլերն սկսել են դպրոցական մարզական սեկցիաներից:

Ֆիզկուլտուրնիկի օրը դարձել է մեր սիրված տոներից մեկը, որը հավակնում է դառնալ համաժողովրդական: Գյուղերում ու քաղաքներում անցկացվում են տարբեր միջոցառումներ օրվա առթիվ:

Այս կրթության, գիտության և սպորտի նախարարության նախաձեռնությամբ մայրաքաղաքում անցկացվեցին մի շարք միջոցառումներ Ֆիզկուլտուրնիկի օրվա կապակցությամբ: Տոնական օրվա մեկնարկը տվեցին հեծանվորդները: Առավոտից հե-

քարում գավաթակիր դարձավ Վահե Համբարձումյանը (հ. 4 դպրոց): Տղաների համար 10 տեղ էր սահմանվել՝ հաշվի առնելով նրանց մեծաթիվ լինելը: Պարզևները հանձնեց և Ֆիզկուլտուրնիկի օրվա առթիվ հեծանվավազքի մասնակիցներին շնորհավորեց ԱՀ ԿԳՍ փոխնախարար Աշոտ Դանիելյանը:


Ֆիզկուլտուրնիկի օրվա նվիրված մեկ այլ միջոցառում Ստ. Շահումյանի անվան հանրապետական մարզադաշտում է անցկացվել: Այստեղ կազմակերպված բաց դասը «Ֆիզկուլտուրա» առարկայից մայրաքաղաքի դպրոցների այն աշակերտների համար էր, ովքեր այդ օրը առարկայից դաս ունենին:

Նույն այդ ժամանակ «Վալեքս Գարդեն» հյուրանոցային համալիրի մարզադաշտում անցկացվել է ֆուտբոլային մրցաշար, որին մասնակցել են մայրաքաղաքի դպրոցների մինչև 9-րդ դասարանների աշակերտները: Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԿԳՍ նախարարության կողմից պարգևատրվել են նվեր-քարտերով:

Ֆիզկուլտուրնիկի օրվա կա-

Աղաբայանը:

- Ալնհայտ է, որ մեր հանրապետությունում օրեցօր աճում է հետաքրքրությունը սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հանդեպ, և վստահ ենք, որ հանրապետությունում կառուցվող ժամանակակից մարզամշակութային համալիրը, տարբեր մարզամշակութային շինություններն առաջիկա տարիներին ավելի են ընդլայնելու մեր հնարավորությունները: Պարզապես այս օրը նրա համար է, որպեսզի մենք և



մեկ անգամ կարևորենք առողջ արթնակերպը: Ֆիզկուլտուրայի և սպորտի հանդեպ հետաքրքրությունը սկսվում է դպրոցից ու մարզադպրոցից, և դրանում մեծ ներդրում ունեն մեր ֆիզկուլտուրայի ուսուցիչներն ու մարզիչները: Ես շնորհակալություն եմ հայտնում նրանց և մաղթում բոլորիս առողջ մարմնի մեջ առողջ հոգի, մասնավորապես ասել է Ն. Աղաբայանը:

Այս կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից մարզական ասպարեզում երկարամյա ու բեղմնավոր աշխատանքի համար պատվոգրերով պարգևատրվել են ոլորտի մի շարք ներկայացուցիչներ:

Տոնական համերգին ակորեատիկ համարներով հանդես են եկել Հայաստանի Հանրապետության ակորեատիկ մարմնամարզության հավաքականի անդամները, իսկ երաժշտական ու պարային կատարումներով՝ «Արցախի ծայրեր» երաժշտական համույթի ներկայացուցիչները, պարարվեստի քոլեջի սաները, սպորտային պարերի խմբակները և այլն:

Երեկոյին ներկա՝ խարկվում բնակվող մեր հայրենակից, սամբո մարզաձևի սպորտի վարպետ Վալերի Բադուցը, շնորհավորելով բոլորին տոնի առթիվ, նշեց, որ սպորտի հիմքը ֆիզիկական դաստիարակությունն է, առանց որի հաղթանակ ու ձեռքբերում չի կարող լինել:

Տոնական միջոցառումը պարային համարներով եզրափակել են պրոֆեսիոնալ պարահանդեսային պարերի աշխարհի և Եվրոպայի չեմպիոններ՝ արմատներով արցախցի Արսեն Աղամալյանը և նրա կինը՝ Օքսաննա Վասիլյան: Մեր համերկրացին ցանկություն է հայտնել աջակցել իր հայրենակիցներին նոր նախագծի հիմքերը դնելու:

Բացման խոսքով հանդես է եկել ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե

ՇԵՐՈՍԻ ՀՈԳԻՆ ԱՐՉԱԽՈՒՄ Է



Սեպտեմբերի 16-ին մարզաշատ էր Արցախի Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ գյուղի դպրոցի բակը: Կայացավ նորոգ շենքի բացման և անվանակոչման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, պաշտոնատար այլ անձինք, Աղավնո գետի հովտի համայնքների ղեկավարներ, դպրոցների տնօրեններ, հյուրեր: Դպրոցը կոչվեց 2016-ի Ապրիլյան քառօրյայի հերոս Մերուժան Ստեփանյանի անունով: Այստեղ էին հերոսի ծնողները, հարազատներ, ընկերներ:

Մերուժան Ստեփանյանը ծնվել է 1993թ. հունվարի 17-ին Գյումրի քաղաքում: Սովորել է Գյումրու Մուշ քաղաքային հ. 42 դպրոցում: Ավարտելուց հետո սովորել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում: 2016թ. ապրիլի 2-ի լույս 3-ի գիշերը շփման գծում արթնացրեցին հորձակումը հետ մղելիս հերոսաբար զոհվեցին 4-րդ դասակի հրամանատար, պայմանագրային զինծառայող ավագ լեյտենանտ Մերուժան Ստեփանյանը, զինծառայողներ Ռաֆիկ Հակոբյանը, Աղասի Ասատրյանը և Վիկտոր Յուզիխովիչը՝ ոչնչացնելով 20-ից ավելի թուրք ասկարի:

Դպրոցի շենքի բացման հանդիսավոր արարողությունը սկսվեց Արցախի օրհներգով, եղավ լուսնային րոպե՝ ի հիշատակ Արցախյան զոհամարտում և հետագայում մարտիրոսված բոլոր քաջորդիների հոգիների: Բերձորի Սբ. Համբարձում եկեղեցու նորանշանակ հոգևոր հովիվ Տեր Բենիամին քահանա Օստրոյանը Տերունական աղոթքով սկսեց ելույթը: Շրջվարչակազմի ղեկավար Ստեփան Սարգսյանն իր շնորհավորական խոսքում կարևորեց երկու հանգամանք. Մոշաթաղի դպրոցի հիմնանորոգումն ու բացումը համարեց Արցախ աշխարհի ազատագրման, կայացման և շենացման խորհրդանիշ: Նշեց, որ այժմ բարեգործական ծրագրերին, բացի արտերկրի մեր հայրենակիցներից, օժանդակում են ներսի բարերարները: Որպես երկրորդ կարևոր հանգամանք նշեց այն, որ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի հետ Մոշաթաղում իրականացնելով բարեգործական ծրագրեր՝ հիմնանորոգելով դպրոցը, մանկապարտեզը, բուժկետը, հանդիսությունների սրահը, մանկական խաղահրապարակը և այլն, նպաստում են այն բանին, որ գյուղը դառնա Աղավնոյի ծորակի ենթակետը:

Մերուժան Ստեփանյանի հայրն ասաց, որ հպարտություն է զգում, որ հայրենիքի ազատագրված այս գյուղում բացվեց որդու անվան դպրոցը. «Դպրոցը որդու անունով կոչվելով՝ դուք արժևորում եք բոլոր այն քաջերին, ովքեր իրենց կյանքը տվեցին այսօրվա համար»:

ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբայանն իր ելույթում ասաց. «Մեր ժողովուրդն այսպես է խոնարհվում հերոսների առջև, այսպես է խոնարհվում նաև Մերուժանի առջև, որն իր կյանքը զոհաբերեց հանուն այսօրվա: Վստահ ենք, որ մեր ուսուցիչներն անելու են ամեն ինչ, որ այստեղ կրթություն ստացող աշակերտները դառնան այն կարող ուժը, որն ապահովելու է այս հողի վերագարծնքը: Մեր աշակերտներին և ուսուցիչներին ուսման ոլորտում մաղթում են մեծագույն հաջողություններ»:



Րի» մարզամշակութային միջոցառումը, պրոֆեսիոնալ բռնցքամարտի մրցաշարը: Էլ չենք թվարկում տարվա ընթացքում անցկացված միջոցառումները: Իսկ Եվրոպայի և աշխարհի արցախցի մեր չեմպիոններով արդեն վաղուց չենք զարմանում, հիանում ենք և սպասում նորանոր հաղթանակներ միջազգային մրցախաղերում: Սրանք լավագույն ցուցանիշներ են, որոնցով մեր երկիրը ներկայանում է աշխարհին, մեծացնում իր ճանաչելիության հնարավորությունները:



Սպորտի բնագավառում մեր երկրի ձեռքբերումները թիչ չեն: Բայց մարզական հաջողությունների ակունքը սպորտի մասսայականացումն է, և մեր երկրի ջանքերն ուղղված են այն բանին, որ սպորտը հասանելի լինի բոլոր մարդկանց՝ նրանց բոլոր տարիքներում:

2010 թվականից Արցախի կառավարության որոշմամբ սեպտեմբերի 17-ը նշվում է որպես Ֆիզկուլտուրնիկի օր: Դա միայն պրոֆեսիոնալ մարզիկների տոնը չէ, այլև մարզասերների, բոլոր նրանց, ովքեր անտարբեր չեն առողջ արթնակերպի նկատմամբ: Շատ կարևոր է, որ ֆիզկուլտուրային պարապմունքները մատչելի լինեն բոլորին: Անշուշտ, այս համատեքստում կարևորվում է դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դրվածքի բարձրացումը: Առաջին հերթին՝ ֆիզիկական առողջ սերունդ ունենալու նպատակով, քանի որ բոլոր բնագավառներ-

ժանիվներով այստեղ էին հավաքվել մայրաքաղաքի հանրակրթական դպրոցները ներկայացնող շուրջ 150 պատանիներ ու աղջիկներ: Հեծանվորդները Մաշտոցի պողոտայով շարժվեցին դեպի Հեթիմյան, Նաբերձումայա փողոցները և նույն երթուղով վերադարձան մեկնակետ: Երեք տարի առաջ, երբ առաջին անգամ հեծանվորդներ ներառվեցին միջոցառումների ծրագրում, մասնակցում էր մեկ աղջիկ, իսկ այս տարի նրանք ութն էին, ընդ որում, ամենափոքրը՝ ութ տարեկան: Աղջիկների համար սահմանված հինգ մրցանակային տեղերի հաղթողները պարգևատրվեցին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության պատվոգրով, իսկ առաջին երեք տեղերը զբաղեցնողները՝ նաև մեդալով: Առաջին տեղ զբաղեցրած Լաուրա Աղաջանյանը (հ. 3 դպրոց), որը կրկնակի չեմպիոն է հեծանվավազքի սպորտում, արժանացավ նաև զավթաթի: Տղաների մրցապայ-

Ս. ՎԱՐԻՆԵՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ԼՂՀ) ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՐԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՌԿԱ ԱՆԿԱՍԵԼԻ ՀԻՄՔԵՐԸ

Լենսեր ԱՂԱՆՎԱՅՍԻ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Այսօրվա դրությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում տարվող բանակցությունները հիմնականում հենվում են միջազգայնորեն ճանաչված երկու սկզբունքների վրա՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության: Պարտոգրքային և որի հակակշիռ գոյություն ունեցող պատմական, իրավական ու քաղաքական անհերքելի փաստերի, հայկական կողմը շարունակում է առավելապես հենվել առաջին սկզբունքի վրա, երբ հենց սկզբից պարտավոր էր հավասարապես հենվել նաև երկրորդ սկզբունքի վրա: Ադրբեջանական կողմը շարունակում է ճարավորեն օգտվել հայկական կողմի այդ թերացումից՝ թմբկահարելով տարածքային ամբողջականության սկզբունքը և Ղարաբաղը (ոչ միայն Լեռնային) միայն իրեն պատկանելի: Բանակցային գործընթացում անտեսված են երկրամասի հայանպաստ, անհերքելի դրվագներով լեցուն պատմությունը, ցեղասպանություն ապրած հայության համար չարաբաստիկ թուրքալուծիկյան Ռուսաստան այնպես, ՌԿՊ(Բ) Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի պլենումի միտքի որոշումը, հատկապես այդ իրեշավոր որոշման ք. և դ. կետերը: Մոռացված է խՍՀՄ կազմում ԼՂԻՄ-ի և Խորհրդային Հայաստանի հայերի 70-ամյա պայքարն արդարությունը վերականգնելու ուղղությամբ, իսկ խՍՀՄ-ի փլուզումից հետո շուրջ 30 տարի է, ինչ նշվում է պայքար ԼՂՀ-ն (Արցախի Հանրապետություն) ճանաչել տալու համար: Այդ պատճառով առաջացել է հույժ անհրաժեշտություն՝ թարմացնելու բանակցային գործընթացի մասնակիցների, հատկապես ադրբեջանական կողմի հիշողությունը:

Շարադրենք առաջին հերթին այն անառարելի փաստերը, որոնք պարզաբանում են, թե ինչու և ինչպես բացառապես հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղը հայտնվեց պատմությանը մինչ այդ անհայտ Ադրբեջանական ՍՄՀ կազմում:

Ղարաբաղը մտավ Ռուսական կայսրության մեջ ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Գյուլիստանի 1813թ. պայմանագրով՝ կնքված բացառապես հայերով բնակեցված Գյուլիստան բնակավայրում, որը գտնվում է այժմ ադրբեջանցիների կողմից օկուպացված ԼՂՀ Շահումյանի շրջանում:

Մինչ Ռուսաստանին միանալը Արցախը (հետագայում կոչվել է նաև Փոքր Սյունիք, Խաչեն, Ղարաբաղ) հանդիսացել է Մեծ Հայքի տասներորդ նահանգը և ունեցել է փառավոր պատմություն (տե՛ս, օրինակ, "Нагорный Карабах-историческая справка" Изд-во АН Арм. ССР, 1988г.): Արցախում նախարարական (իշխանական) տան գործունեությունը չի դադարեցվել և ոչ մի օր, նույնիսկ՝ թաթար-մոնղոլական տիրապետության ժամանակ: 16-րդ դարից սկսած՝ հին նախարարական տներին փոխարինեցին մելիքները (նշանակում է՝ իշխան, տիրակալ), և Արցախ-Ղարաբաղում սկսեցին իշխել հետևյալ հայկական՝ Խամսայի մելիքությունները («խամսա»՝ արաբերեն նշանակում է հինգ):

1. Գյուլիստան - տարածվում է Գանձակից (Գյանջա-Կիրովաբադ) մինչև Թարթառ գետը (ընդգրկում է մոտավորապես նախկին Ադր. ԽՍՀ Նանլար-Գետաշեն և Շահումյանի շրջանները):

2. Ջրաբերդ - տարածվում է Թարթառ գետից մինչև Խաչեն գետը (ԼՂՀ Մարտակերտի շրջանի հյուսիսային և կենտրոնական մասերը, այդ թվում՝ Քարվաճառը (Քյալբաջարը):

3. Խաչեն - տարածվում է Խաչեն գետից մինչև Բալուջա գետը (ԼՂՀ կենտրոնական մաս):

4. Վարանդա - տարածվում է այդ գետից մինչև Դիզակայտ լեռան շրջակայքը (ԼՂՀ Աս-

կերանի, Մարտունու, Շուշիի շրջանները):

5. Դիզակ - տարածվում է Դիզակայտից մինչև Արաքս գետը (ԼՂՀ Հադրուբի, Կարյազին-Ֆիզուլիի, Բերդաձորի, Կովսականի շրջանները):

Այդ հինգ հայկական իշխանությունները լի-նելով կողք-կողքի հարևաններ՝ կազմել են մեկ միասնականություն և գոյատևել մինչև ռուսական տիրապետության հաստատումը 1813թ.: Խամսայի մելիքության բնակչությունը բացառապես կազմված էր հայերից (տե՛ս, օրինակ, Ղարաբաղը Ռուսաստանին միացման գործընթացի անմիջական վկա Միրզա Յուսուֆի «Ճշմարիտ պատմություն» գիրքը (վերջերս այն պարսկերենից թարգմանվել է հայերեն): «Ղարաբաղի հինգ մահալները, որոնց բնակչությունը բացառապես քրիստոնյա է, հայտնի են «Խամսա» անունով: Նրանցից առաջինը Դիզակն է, որը տարածվում է արևմուտքից Հազարի գետից և լայնությամբ՝ Արաքս գետի երկայնքով»: Միրզա Յուսուֆի գրքից մասնավորապես հետևում է, որ Արցախի ինքնապաշտպանական բանակի կողմից Արաքսի երկայնքով ազատագրված տարածքները հանդիսացել են Դիզակի մելիքության մի մասը, և այնտեղ մինչև Ռուսաստանին միանալը (19-րդ դար) ապրել են միայն հայեր: Գուցե մեզ բացատրվի, թե որտեղ էին բնակվում այդ տարածքներին հավակնող ադրբեջանցիները, և ինչ էին նրանք իրենցից ներկայացնում:

Ռուսաստանի կազմ մտնելուց հետո՝ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը ներառյալ բոլոր տարածքները ղեկավարել են Ռուսաստանում ընդունված նահանգապետության (գուբերնատորստվո) սկզբունքով:

Քսաներորդ դարի սկիզբը դարձավ ողբերգական Հայաստանի համար: Թուրքիայի կողմից 1915թ. ցեղասպանության և ճեթարկված Հայաստանը 1921թ. ստացավ ևս երկու սուկալի հարված, այս անգամ՝ նոր կազմավորված Թուրքիա-բոլշևիկյան Ռուսաստան ալյանսի կողմից: Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում (29 նոյեմբերի 1920թ.) չփրկեց նրան տարածքային նոր կորուստներից:

1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց ռուս-թուրքական «Բարեկամության ու եղբայրության մասին» պայմանագիրը: Համաձայն այդ պայմանագրի՝ Թուրքիային են հանձնվում Ղարսի մարզը (գտնվել է Ռուսական կայսրության կազմում 1879 թվականից), Երիվանի նահանգի Սուրմալուի գավառը Հայաստանի Խորհրդանիշ Արարատ լեռան հետ միասին (Ռուսական կայսրության կազմում էր 1828 թվականից): Կողմերը համաձայնեցին Երիվանի նահանգի Նախիջևան գավառի տարածքի հիման վրա ձևավորել ինքնավարություն՝ այն հանձնելով Ադրբեջանին որպես «պրոտեկտորատ»՝ պայմանով, որ Ադրբեջանը այն չի գիշի երրորդ երկրի: Որպես երրորդ երկիր, իհարկե, նկատի էր առնվում Հայաստանը:

Հանրահայտ է հայերի հսկայածավալ ավանդ ռուս-թուրքական բոլոր հաղթական պատերազմներում: Հայերը տվեցին նշանավոր գեներալների մի ամբողջ համաստեղություն, որոնք բազմապատկեցին ռուսական զենքի փառքը:

Խորհրդային պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի ժողով Կ.Գ. Հիչերինը աշխատել է դիմակայել նշված տարածքների հանձնմանը Թուրքիային, դեմ է արտահայտվել նաև պատվիրակության ռազմական փորձագետ՝ գեներալ-լեյտենանտ Ա.Ս. Սամոյլոն, սակայն նրանց ճիգերը չեն պահպնել հաջողությամբ: Ազգային հարցերի գծով այդ ժամանակվա ժողովուրդի Ստալինի միջամտությունը ապահովել է այդ պրոթուրքական պայմանագրի ընդունումը:

1921թ. մարտի 16-ի պայմանագիրը համաշխարհային պատմության մեջ աղաղակող

իրողություն է, որը հակասում է միջազգային իրավունքի բոլոր նորմերին: Հայաստանին անմիջապես առնչվող հարցերը լուծվեցին նրա թիկունքում: Արդյունքում Հայաստանը իր բուն տարածքից կորցրեց մոտ 30 հազար քառակուսի կիլոմետր:

Նպատակ հետապնդելով ինչ-որ չափով մեղմել մոսկովյան պայմանագրից հետո ստեղծված նեգատիվ իրավիճակը՝ 1921թ. հոկտեմբերի 13-ի Ղարսի պայմանագիրը գործնականում կրկնեց մոսկովյան պայմանագրի բոլոր կետերը: Սակայն պայմանագիրը կնքվեց Թուրքիայի և Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև՝ ՌՍՖՍՌ-ի սևեռուն հսկողության ներքո: Հայաստանը չվավերացրեց Ղարսի պայմանագիրը:

Նոր-նոր խորհրդայնացված Հայաստանին սպասում էր ևս մեկ խոշոր աղետ, որի ողբերգական հետևանքների սկանառես ենք առ այսօր:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո 1918թ. մայիսին Անդրկովկասում հռչակվեց երեք անկախ հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և պատմությանը մինչ այդ անհայտ Ադրբեջանի ստեղծումը: Մուսավաթականները Թուրքիայի թելադրանքով վերջինիս այդ անվանումով են կոչել հեռահար նպատակով՝ հարմար պահի ներկայացնել տարածքային պահանջներ (այսօր արդեն նրանք այդ անուն են Իրանին՝ հյուսիսարևմտյան մասը, որը կոչվում է Ադրբեջան (Ատրպատական), և որտեղ ապրում են որոշակի քանակությամբ թուրքեր): Շեշտեմք, որ 1926թ. մարդահամարի մեջ նշված չէ ադրբեջանցի ազգ, այլ նշված է՝ կովկասյան թաթարներ:

Նորաստեղծ մուսավաթական պետությունը միանգամից սկսեց տարածքային պահանջներ ներկայացնել իր հարևանների՝ Վրաստանին ու Հայաստանին: Այդ պատճառով նա չճանաչվեց և չընդունվեց Ազգերի Լիգա:

Ինչպես հայտնի է, Անդրկովկասի խորհրդայնացումը սկսվեց 11-րդ Կարմիր բանակի օգնությամբ՝ արևելքից արևմուտք նրա շարժման ուղղությամբ (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան): 1920թ. ապրիլի 26-ին 11-րդ Կարմիր բանակը հատեց մուսավաթական Ադրբեջանի հյուսիսային սահմանը, որին անմիջապես հետևեց Աթաթուրքի հրամանը իր Արևելյան բանակի հրամանատար Կարաբեքիրին՝ չխոչընդոտել 11-րդ բանակի առաջխաղացմանը: Ապրիլի 28-ին հռչակվեց խորհրդային կարգերի հաստատումը Ադրբեջանում, իսկ մայիսին՝ Ղարաբաղում: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը անմիջապես սկսեց տարածքային պահանջներ ներկայացնել «բուրժուական» Հայաստանին՝ լկտիաբար պահանջելով Ղարաբաղը, Ջանգեզուրը, Նախիջևանը: Դա թուրքական պլան էր՝ օգտվել ստեղծված բարենպաստ իրադրությունից և տարածքայնորեն միավորել Ադրբեջանը Թուրքիային: Ջանգեզուրի հայկական ինքնապաշտպանական ուժերի ազգային հերոս Մեծն Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ հաջողվեց պահպանել Ջանգեզուրը, իսկ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հրաժարվեց բավարարել ադրբեջանցիների պահանջները: Պանթուրքիզմի այդ ծրագիրն այսօր էլ լկտիաբար հնչեցվում է: Ադրբեջանի և Թուրքիայի միջև այժմ գոյություն ունեցող 150լն լայնությամբ տարածքի (հայկական սեպ) համակողմանի ամրացումը և պահպանումը երաշխիք է այդ աննախադեպ ցինիկ նպատակի ընդմիջտ թաղմանը:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման (29 նոյեմբերի 1920թ.) հենց հաջորդ օրն ընդունվեց Ադրբեջանի Հեղկոմի ղեկավարացիան, որտեղ «ողջունելով եղբայրական ժողովրդի հաղթանակը»՝ շեշտվում էր. «Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և

Նախիջևանը ճանաչվում են Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մաս»: Դեկլարացիան ստորագրել են Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն.Նարիմանովը և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Հուսեյնովը:

ՌԿՊ(Բ) Կովբյուրոյի 1921թ. հունիսի 3-ի պլենումը հանձնարարեց Հայկական ՍՍՌ կառավարությանը ընդունել համապատասխան դեկլարացիա, և հունիսի 12-ին ընդունվեց հետևյալ դեկլարացիան. «Հիմնվելով Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Հեղկոմի ղեկավարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի սոցիալիստական ռեսպուբլիկաների միջև պայմանավորվածության վրա՝ հռչակվում է, որ այսուհետև Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի անբաժանելի մասը»: Դեկլարացիան ստորագրել են Հայաստանի Սովետականի նախագահ Ա. Մյանսիկյանը և Սովետականի քարտուղար Մ.Կարաբեկյանը:

Ուրախությունը Հայաստանում երկար չտևեց: Շուտով խորհրդային Ադրբեջանի ղեկավարության դիրքորոշումն արմատապես փոխվեց: Ն.Նարիմանովը պահանջեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հարցին պատասխան տալու նպատակով 1921թ. հուլիսի 4-ին հրավիրվում է ՌԿՊ(Բ) Կովկասյան բյուրոյի պլենումը, որն առաջն արարողակարգային խախտումների որոշում է՝ «Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայաստանի ՍՍՌ կազմ, անցկացնել պլեբիսցիտ միայն Լեռնային Ղարաբաղում»: Նարիմանովը չհանդարտվեց. պլենումը նրա առաջարկով որոշեց հարցը տեղափոխել ՌԿՊ Կենտրոնական Կոմիտե՝ վերջնական որոշման: Սակայն հաջորդ օրը կայացավ Կովբյուրոյի նոր միտք, որտեղ Մոսկվայի ներկայացուցիչ Ստալինի ճնշմամբ առանց քվեարկության ընդունվեց հերթական հակահայկական որոշումը: Կովբյուրոյի հուլիսի 5-ի որոշման մեջ մասնավորապես ասված է՝

ա. մուսուլմանների և հայերի միջև խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունից ելնելով՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ՍՍՌ սահմաններում՝ տալով նրան լայն մարզային ավտոնոմիա...

բ. հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշել ավտոնոմ մարզի սահմանները և ներկայացնել Կովբյուրոյի հաստատմանը:

դ. հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշել Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի ծավալը և ներկայացնել Կովբյուրոյի հաստատմանը:

Հետագայում Ղարաբաղի հայերի համար առավել սուսկալի դեր խաղացին որոշման բ. և դ. կետերը:

Փոխանակ ավտոնոմ մարզի կազմում ընդգրկելու Ռուսաստանի մաս կազմելու պահին Ղարաբաղի ունեցած տարածքները կամ ծայրահեղ դեպքում կազմվեր հանձնաժողով՝ բաղկացած ռուսներից, հայերից, ադրբեջանցիներից, որը որոշեր մարզի թե՛ ծավալը, թե՛ սահմանները, այդ հարցերի լուծումը հանձնարարվեց Ադրբեջանի Կենտկոմին (բ., դ. կետեր): Օգտվելով այդ կետերից՝ Ադրբեջանի իշխանությունները, առանց նույնիսկ համաձայնեցնելու Կովբյուրոյի հետ, որը պարտավոր էին, Լեռնային Ղարաբաղից կտրեցին և ավտոնոմ մարզի մեջ չմտցրին Դաշբեսանի, Շամքորի, Խանլար-Գետաշենի, Շահումյանի շրջանները հյուսիսարևմուտքում (շրջանների մեծ մասում հայերը կազմում էին 97-98%), Քելբաջարի, Լաչինի շրջանները՝ արևմուտքում և բոլոր, այժմ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի կողմից ազատագրված տարածքները Մայր Արաքսի երկայնքով: Այս ամենը հանդիսացավ Լեռնային Ղարաբաղի տարածքի առաջին լուրջ տրոհումը: Ավելին,

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«ՀԱՅՈՒ ԳԻՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՉՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ»

Միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովը

Սեպտեմբերի 13-15-ը Ստեփանակերտի «Վալդես Գարդեն» հյուրանոցային համալիրի դահլիճում տեղի է ունեցել «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովը, որը կազմակերպել է Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունը Ստեփանակերտի «Սերոբայ Մաշտոց» համալսարանի հետ համատեղ: Այն նվիրված էր Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին: Գիտաժողովին հրավիրվել է մասնակցում էին հարյուրից ավելի գիտնականներ ու մասնագետներ Արցախից, Հայաստանից ու արտերկրից:

Լու և շարունակելու ձևավորված ավանդույթները: Հույսով են, որ հերթական գիտաժողովը նոր մակարդակի է հասցնելու արդեն ձևավորված փոխգործակցությունը, նպաստելու է հետազոտական նոր նախագծերի իրականացմանը», - ասաց ԿԳՍ նախարարը: Ն. Աղաբալյանը միաժամանակ տեղեկացրել է, որ նախարարության կողմից փոփոխություններ են կատարվել պետական ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտությունների նախագծերի մրցույթի կարգում, և վերացվել են որոշ սահմանափակումներ: Նրա խոսքով՝ այսուհետ մրցույթին կարող են մասնակցել ոչ միայն Արցախը, այլև արտերկրից ներկայացնող գիտնականներ, որոնց թեմաներն առնչվում են Արցա-

սիրություն և այլն: Քննարկված թեմաները վերաբերում էին հետևյալ շրջանակներին՝ պետականության ամրապնդման տեսական ու գործնական հիմնահարցեր, Հայաստան-Արցախ-Ափյուռք փոխհարաբերություններ և համահայկական հիմնախնդիրներ, Հայաստանի և Արցախի հանրապետությունների սոցիալ-տնտեսական զարգացման արդի մարտահրավերներ, Արցախի Հանրապետության ինքնորոշման, կազմավորման և միջազգային ճանաչման հիմնահարցեր, Ղարաբաղյան հակամարտության ծագումը և կարգավորման գործընթացը, Հայոց ցեղասպանության ճանաչումը և թուրքիայի պատասխանատվությունը, հետխորհրդային տարածաշրջանի ճանաչված և չճանաչված երկրների հասարակական-քաղաքական զարգացումներն ու հիմնախնդիրները, սահմանադրականության հաստատման հիմնախնդիրները ճանաչված և չճանաչված պետություններում, հայ մեծերի ժառանգության մերօրյա ընկալումն ու իմաստավորումը:



Բացման խոսքում ԱԵԳՄՄ հիմնադիր Ավետիք Հարությունյանը տեղեկացրեց, որ նախորդ երեք գիտաժողովներին մասնակցել են շուրջ 250 գիտնականներ, ինչը շեշտում է նման միջոցառումների կարևորությունը: Իսկ հերթական գիտաժողովի նպատակն է գիտատեսական քննարկումների շրջանակում բացահայտել երիտասարդների գիտական ներուժը: Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանն իր օրհնանքի խոսքում մասնավորապես ասել է. «Այս միջոցառումը կազմակերպվել է մի շատ կարևոր տարեդարձի նախօրեին. շուտով Հայ Առաքելական եկեղեցին նշելու է Արցախի թեմի վերաբացման 30-ամյակը: Ցանկացած ազգի համար մեծագույն ծեղրերումը պետականություն ունենալն է: Շուրջ 600 տարի զրկված լինելով պետականությունից՝ հայերը դա շատ լավ են գիտակցում:

Խի Հանրապետությանը: ԵՊՀ պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը գիտաժողովի մասնակիցներին է ներկայացրել Երևանի պետական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանի շնորհավորական ուղերձը, որում վերստին կարևորվել է միջոցառման նշանակությունը հետագա համագործակցության գործընթացում:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես են եկել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աղվան Հովսեփյանը (ՀՀ), պրոֆեսոր Մարտիկ Ժեյնոն (Լեհաստան), Համբուրգի համալսարանի դասախոս Օտտո Լուխտերհանդտը: Վերջինս մասնավորապես նշել է, որ շատ տպավորված է Արցախ կատարած այցով և տեսածն ու լսածն անպայման կհասցնի երկրի գիտական շրջանակներին: Խոստանալով, որ հաջորդ գիտաժողովին ևս մասնակցություն կունենա, նա միաժամանակ հույս է հայտնել, որ մինչ այդ միջազգային համապատասխան կազմակերպությունները հետամուտ կլինեն Ստեփանակերտի օդանավակայանի գործարկմանը, և խնդրի լուծման տարբերակ, այնուամենայնիվ, կգտնվի: «Արցախն այսօր մի կղզյակ է, որտեղ ապրող ժողովրդի պաշտպանության և անվտանգության ապահովման հարցով չափազանցված պիտի լինի ողջ քաղաքակիրթ աշխարհը: Որքան էլ տարօրինակ թվա, Արցախի Հանրապետությունը Հարավային Կովկասում ժողովրդավարության զարգացման լավագույն օրինակն է, ինչն իրողություն է, և ոչ ոք չի կարող դա ժխտել», - ասել է գերմանացի գիտնականը:

Հարավային Օսիայի Հանրապետության պետական համալսարանի ռեկտորի և հարավստական գիտահետազոտական ինստիտուտի ղեկավարի անունից մասնակիցներին ողջունելով՝ Սուլան Պլիկը նշել է, որ տարածաշրջանային անվտանգության առումով գիտաժողովի թեման խիստ արդիական է և կարող է նպաստել հանրության մեջ հանդուրժողականության ամրապնդմանն ու չճանաչված պետությունների ինքնորոշման կայացմանը:

Գիտաժողովի նյութերը, ինչպես տեղեկացրել է Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման նախագահ Ավետիք Հարությունյանը, կտպագրվեն «Գիտական Արցախ» հանդեսում:

Գիտաժողովն անցկացվեց մի շարք ոլորտներով՝ իրավագիտություն, քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, պատմություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, մանկավարժություն, հոգեբանություն, բանա-

ՇԵՐՈՍԻ ՀՈԳԻՆ ԱՐՉԱՆՈՒՄ Է

Մոշաթաղի դպրոցի տնօրեն Անահիտ Հովհաննիսյանը ներկայացրեց կրթօջախի պատմությունը: 1995 թվականին բացել են կրթօջախը, աշխատել են անհարմար պայմաններում, սակայն հավատացել են այսօրվան: Ընդհանրապես հայտնեց Արցախի կառավարությանը և «Հայրենասեր» ՀԿ համահիմնադիրներին, որ երկար տարիներ անց ունեցան նման կրթօջախ: Հավաստիացրեց, որ այսուհետ առավելը կանեն՝ արժանի լինելու Հայրենիքի սահմանը պաշտպանելիս մարտիրոսված քաջի անունը կրող դպրոցում աշխատելուն:

Ելույթներից հետո ներկաներին իրենց կատարումներով՝ երգ ու ասմունք, պար, հերոսի փառաբանման խոսքեր, հանդես եկան դպրոցի սաներն ու այս տարվա չորս շրջանավարտները, որոնք այժմ ուսանում են Արցախի պետական համալսարանում և Շուշիի «Գյուրջյան» ինստիտուտում:

Դպրոցի մուտքի կարմիր ժապավենը կտրեցին հերոսի մայրը՝ Նունե Ստեփանյանը և «Հայրենասեր» ՀԿ համահիմնադատուհի Նելլի-Շուշի Մարտիրոսյանը դատեր՝ փոքրիկ Շուշիի հետ: Անվանակոչման ցուցանակը բացեցին հերոսի ծնողները: Հանրապետության Նախագահն ու նրան ուղեկցողները ծանոթացան դպրոցի պայմաններին, շրջեցին դասասենյակներում: Նախագահը զրուցեց աշակերտների հետ: Դպրոցի միջանցքի պատին հերոսի դիմանկարն է՝ «...Կյանքս կտամ հայրենիքիս, Հոգիս՝ Աստծուն, Պատիվս՝ ինձ...»: Նախագահն առանձնագրույց ունեցավ այս տարվա շրջանավարտների հետ՝ ծանոթանալով նրանց հետագա ծրագրերին:

Վերջում զրուցեց Աղավոնյի հովտի համայնքների ղեկավարների հետ, հետաքրքրվեց տարածքի խնդիրներով: Վերադարձին այցելեց Մոշաթաղի հարևան Տանձուտ գյուղի դպրոցում կատարվող շինարարական աշխատանքներին: Դպրոցի եռահարկ շենքը հիմնանորոգվում է «Թուֆենյան» հիմնադրամի կողմից:

Հանդիսավոր մասից հետո համերգով հանդես եկավ «Բերծոր» համույթը:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

Սեփ. լրատվություն

ԱՐՉԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ԼՂՀ) ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՌԿԱ ԱՆԿԱՍԵԼԻ ՀԻՄՔԵՐԸ

կար պահ, երբ Ադրբեջանը հրաժարվեց մարզի կազմավորումից, սակայն ստիպեցին, և 1923թ. հուլիսի 7-ին հատուկ դեկրետով ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզը (ԼՂԱՄ, հետագայում՝ ԼՂԻՄ)՝ տարածքայնորեն լրիվ մեկուսացված Հայաստանից, բոլոր կողմերից շրջապատված միայն Ադրբեջանով: Ավելին՝ մարզի մի շրջանից մյուսն այցելելու համար անպայման պետք է անցնել Ադրբեջանի որևէ հարակից շրջանով, որը մեծ բարդություններ ստեղծեց հատկապես մարզի ինքնապաշտպանությունը կազմակերպելու օրերին:

Բայց խաղաղություն այդպես էլ չհաստատվեց: Կովբյուրոյի որոշումից անմիջապես հետո Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը 1921թ. հուլիսի 16-ի նիստում իր անհամաձայնությունն է արտահայտել «ընդունված» որոշումն ընդ: Արդարության վերականգնման պայքարը շարունակվեց ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը: Այն էլ ավելի թեժացավ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ ուղեկցվելով արյունալի բախումներով, որը շարունակվում է առ այսօր:

ԽՍՀՄ փլուզումից հետո, հիմնվելով ԽՍՀՄ դեռևս գործող օրենքների, մասնավորապես, 1990թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից Միութենական Հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի և Միջազգային իրավական նորմերի վրա, ձևավորվեցին երկու անկախ պետություններ՝ Ադրբեջանական Հանրապետություն (ԱՀ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ): Այսօր խոսել Ադրբեջանական Հանրապետությունում տարածքային ամբողջականության մասին՝ հասկանալով նրա կազմում ԼՂԻՄ-ի և ԼՂՀ ինքնապաշտպանական բանակի կողմից ազատագրված տարածքները, անհեթեթություն է, քանզի՝

գ. բազմակի չափով կերկարի թշնամու և հայկական ինքնապաշտպանական ուժերի միջև առկա սահմանը,

դ. ԼՂՀ բոլոր բնակավայրերը առանց բացառության կդառնան խոցելի սովորական ռազմական ծանր տեխնիկայի համար, և նեղ թշնամին կստանա հնարավորություն՝ մեկ հզոր հարվածով ընդմիջտ լուծել խնդիրն իր օգտին:

ա. այդ տարածքները բնիկ հայկական են և թուրքա-բոլշևիկյան Ռուսաստան տանդեմի կողմից սկուտեղի վրա, առանց մի կրակոցի, 1921թ. մատուցվել են նորաստեղծ, պատմությանը մինչ այդ անհայտ Ադրբեջանին, բ. 1991թ. ձևավորված Ադրբեջանական Հանրապետությունը (ԱՀ) անմիջապես ձեռնարկեց քայլեր Ղարաբաղյան հիմնահարցը

նազանկան ճանապարհով լուծելու ուղղությամբ՝ 1992թ. սկսելով լայնամասշտաբ պատերազմ ԼՂՀ-ի դեմ:

ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերին հաջողվեց տալ արժանի հակահարված, որի արդյունքում հաստատվեցին այսօր գոյություն ունեցող սահմանները հակամարտող կողմերի միջև: Ինչպես ցույց տվեցին 2016թ. ապրիլի 2-5-ի արյունալի դեպքերը, ԼՂՀ պաշտպանության բանակն ունակ է պաշտպանել իր Հայրենիքը և պատիվը:

Կովբյուրոյի որոշմանը չկա որևէ արդարացում:

Հիմնվել բոլշևիկյան այդ օրգանի որոշման վրա՝ ԼՂԻՄ-ը և նրա շուրջն ազատագրված տարածքները համարել ադրբեջանական, հանցագործություն է և արդարության վերականգնման համար պայքարած մի քանի սերունդների հիշատակի պղծում:

Ներկա բանակցային գործընթացի այն մասնակիցները, որոնք հորջորջում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, համաշխարհային դեմոկրատական հանրության կողմից կզնախառնվեն որպես Կովբյուրոյի չարագործ որոշման համահեղինակներ:

30 ՏԱՐԻ ԱՆԱԶ

Իմ օրագրից

1989-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԸ

Չգիտեմ ինչու՝ քանի գնում, գրառումներս նվազում են: Այսպես. «Չորս ամիս անընդմեջ գործադուլից հետո ժողովուրդը անցնում է աշխատանքի: Այո, ժողովուրդը լծվել է աշխատանքի, բայց դպրոցը՝ չէ: 1989-ի սեպտեմբերին դպրոցներում նոր ուսումնական տարին 10 օր ուղացումով սկսվեց: Այսօր՝ 30 տարի անց, շատ են ավիտոսում, որ պարապմունքներն ուղ սկսվելու պատճառը չեն նշել, և հիմա էլ, որքան քանք են թափում հիշելու, ապարդյուն է անցնում: Մտածում եմ. «Գուցե այգեկույթն էր պատճառը, որ սովորաբար բարձր դասարանների աշակերտների մասնակցությամբ էր կատարվում: Այդ տարիներին խաղողի արտադրությունը անցնում էր 200 հազար տոննայից, աշխարհում չկար մի երկիր, որտեղ մեկ շնչի հաշվով մեկ տոննա խաղող արտադրվեր, իսկ Ղարաբաղը հասել էր դրան: Եթե այգեկույթը լիներ պատճառը, այդ դեպքում ինչու՞ տարրական դասարանների համար պարապմունքներ չկազմակերպվեցին, ինչու՞ ավանդական Առաջին զանգի արարողությունը չեղավ: Համեմատել է ինձ համար: Գուցե ԿԳՍ նախարարությունն այդ հարցում օգնի...»

Չնայած սեպտեմբերյան փոթորկալից օրեր էին, բայց հուրախություն մեզ, կյանքը շարունակվում էր: Սեպտեմբերի 9-ին իմ ընտանիքը երկրորդ թռուռուկիս ունեցավ, որը կնքվեց Թամարայի անունով:

Այդ օրերին Արցախը դարձյալ շարունակվում էր շրջապատման մեջ մնալ, որի վկայությունը օրագրիս կցված «խորհրդային Ղարաբաղ» թերթի սեպտեմբերի 20-ի համարն է, որում Վ. Իսուկցի «Պետք է փրկել խաղողը» վերտառությամբ հոդվածից ընդգծել եմ. «Մարզի տնտեսական շրջափակումը, որի հետևանքով չեն ստացվում նաև վառելիքաքսանյութեր, խիստ բացասաբար է անդրադառնում խաղողաբաղի ընթացքի վրա ինչպես Ասկերանի շրջանում, այնպես էլ ամբողջ մարզում, վտանգի տակ է արևահամ բերքի ճակատագիրը»:

Շրջափակման հետևանքների մասին է գրում Մարտակերտի «Քարեկանություն» շրջանային թերթի խմբագիր Ս. Մուսուկը. «Շրջակենտրոնը մարզկենտրոնի հետ միակ լեռնային դժվարանց ճանապարհը հարմար է միայն փոքր բեռնատար մեքենաների համար: Ծանապարհների շրջափակման պատճառով հնարավոր չէ ստանալ ֆոնդով հասանելիք այլուրը, որի պաշարը հազիվ հերթի 2-3 օր...»: Կամ՝ «...Շրջանի Օրթափաշա գյուղի ճանապարհին քարկոծվել է ներքին գործերի

ԼՂԻՄ վարչության «ՈւԱԶ» մակնիշի ավիոմեքենան: Իսկ սեպտեմբերի 13-14-ը Բաշադուլենիայա ադրբեջանական գյուղից սպառնացել ու հետ են տվել Մարտակերտից Ստեփանակերտ գնացող մեքենաները»:

Ես հողվածներիցս մեկում գրել եմ, որ մեր Շարժման սկզբնական օրերին մեզ հետ միասին դպրոցներում աշխատում էին ադրբեջանցի ուսուցիչներ, որոնց մագին ոչ ոք չի դիպել: Գյուղերում աշխատում էին նաև անասնապահ ադրբեջանցիներ, որոնց նույնպես չէին անհանգստացնում: Բայց ահա մեր մարզից դուրս գտնվող ադրբեջանական սադրիչ խմբերն սպառնում էին հայկական գյուղերում գտնվող ադրբեջանցի հովիվներին ու ստիպում, որ նրանք արտավայրերից հոտերը բշեն և անցկացնեն մարզի սահմաններից դուրս, իրենք էլ թողնեն աշխատանքը և հեռանան, և քանի՞-քանի դեպքեր են եղել, երբ ամբողջ հոտերով ապրանքը բշել տարել են...»

1989թ. սեպտեմբերին Բաբուն ավելի կատաղիորեն շարունակեց իրականացնել հայատյաց, հայահալած քաղաքականությունը: Բաբվի հեռուստատեսությունն ու ռադիոն ինչեր ասես, որ չէին հորջորջում ծայրերի հասցեին: Դրան էլ ավելացավ Շուշիի հեռուստակայանը, որի հաղորդվարը, որ մեր թիվ 21 պրոֆտեխտունմարանի սովորողներին հատկացված սենյակի գողացված կամ սենյակի մնացորդներով է մեծացել (մայրը ուսումնարանի ճաշարանի վարիչն էր), ինչեր ասես, որ եթերից չէր թափում մեր գլխին: Եթե մեզնից շատերն այդ ժամերին անջատում էին հեռուստացույցը, ապա Կրկժամի հայերը, չհանդուրժելով Շուշից արձակած հաղորդումները, 284 բնակիչների ստորագրությամբ բողոք ներկայացրին մարզային թերթին «Սա՞» է վերակառուցումը՝ վերանգրով, որտեղ նշված է. «Շուշվա նորաբունի հեռուստատեսությունը սկսել է զբաղվել ոչ միայն եթերահեռուսությամբ, այլև մարզկենտրոնի «սահմանների վերածնունդը»: 1989թ. սեպտեմբերի 11-ին ժամը 19 անց 20 րոպեին հաղորդվարն սկսեց այսպես. «Մենք գտնվում ենք Շուշվա շրջանի Քյարքիջահան գյուղում...»: Ստեփանակերտ քաղաքի 26-րդ թաղամասը այդ ո՞ր օրվանից է պատկանում Շուշվա շրջանին և ո՞ր օրվանից է թաղամասը վերանվանվել Քյարքիջահան, այն էլ՝ գյուղ... Ինչո՞ւ է այդքան դժվարացել փաստերը կեղծողներին պատասխանատվության ենթարկելը: Չլինի՞ թե հենց դա է վերակառուցումը...»: Այդ

նույն թերթի լուսանցքներում ես գրել եմ. «Իմ նախկին միամիտ աշակերտներ և նրանց ծնողներ, ախր որտե՞ղ եք եղել մի քանի ամիս առաջ, երբ «Պրավդա»-ն մայիսի 10-ի իր համարում գրել է. «...Մայիսի 5-ին Ստեփանակերտի արվարձան Կրկժամ ավանի մոտ երեք հայեր ծեծկռուտի մեջ են մտել ադրբեջանցիների հետ...»: Ուշադրություն դարձրեք, «Պրավդա»-ն Կրկժամը *ավան* կոչեց, ձեզնից ոչ ոք չարձագանքեց, իսկ Շուշիի հեռուստատեսության հաղորդվարն էլ «ավան» արտահայտությանը «ծանոթ» չլինելով, այսինքն՝ «Պրավդա»-ի այդ հողվածին անտեղյակ, չորս ամիս հետո չորս անսական «ավան»-ը դարձրեց գյուղ: Դեպքերից առաջ անցնելով ասեմ. հետագայում համոզվեցի, որ «Կրկժամ ավան», «Քյարքիջահան գյուղ» վերանվանումները նախորդ մտածված-պլանավորված էին Բաբվում, որով հող էր նախապատրաստվել, և առանց այդ թարթելու Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը 1990թ. ապրիլի 21-ի հրամանագրով ԼՂԻՄ բոլոր շրջանների ու Ստեփանակերտ քաղաքի վարչատարածքային բաժանման մեջ «մասնակի փոփոխություններ» մտցրեց: Ըստ այդ հրամանագրի՝ համատեղ բնակեցման վայրերի կազմից առանձնացվում էին ադրբեջանցիներով բնակեցված մասերը՝ 9 նոր գյուղատեղիներով կազմավորմամբ: Այդ նույն հրամանագրով խոջալու բնակավայրը դասվեց շրջանային ենթակայության քաղաքների կարգը, իսկ Ստեփանակերտի Կրկժամ բնակելի զանգվածը ձևավորվեց քաղաքային տիպի ավանի, և այդ գյուղերում լկտիաբար բարձրացվեցին իսլամական դրոշմեր:

Այս փոփոխությունները կատարվում էին Մոսկվայի աչքի առաջ, Գորբաչովի աչքի առաջ, առանց Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ խորհրդակցելու, նույնիսկ առանց նրանց տեղյակ պահելու, իսկ որ մեր մարզը 88-ի փետրվարից փոթորկված արդար պահանջ էր ներկայացնում անջատվելու Ադրբեջանից, վերջինս վախենում էր «անջատվել» տերմինը օգտագործել, գրում է՝ «առանձնացվում են»:

Փառք Աստուծո, մենք էլ 1988-ի փետրվարի 20-ի պատմական որոշմամբ և 1991թ. սեպտեմբերի 2-ի հռչակագրով առանձնացել ենք Ադրբեջանից և ազատ ու անկախ ապրում ենք՝ էլ ինչո՞ւ մեզ հանգիստ չեն թողնում, ինչո՞ւ մեզնից ձեռ չեն քաշում այս քծուծները:

ԽՈՍՔ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Սեպտեմբերի 1-ին Իվանյանի Օմիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի կոլեկտիվի հրավերով ներկա էի Առաջին զանգի արարողությանը: Նախ բարևեցի անմահության ճանապարհը բռնած՝ հուշարձան դարձած, ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետ, 1995թ. շրջանավարտ նախկին աշակերտիս՝ Օմիկ Կարոյի Գրիգորյանին, որն ասես ուրախ դիտում էր Առաջին զանգի արարողությունը, որտեղ նաև իր դուստրն ու ուստրն են, և զուլխս խոնարհած խորհում էի. «Եթե աշակերտս հրաշքով աչքերը բացեր ու նայեր իր դպրոցի սաների Առաջին զանգի արարողությանը, կբարձրածայներ»:

Առաջին զանգ, դողանցիդ դու, այնպես զրնգա, որ Աշխարհը բնից արթնանա ու հասկանա՝ Նորանկախ մեր պետության Աստված Գանձասարի Երկնքում է բազմած...

Ես սպասում էի, որ ինձ՝ որպես այդ դպրոցի նախկին ուսուցիչ, ողջույնի խոսք կտան, բայց զանգը հնչեց, աշակերտները ներս վազեցին իրենց դասարանները՝ մասնակցելու Արիության դասին, որը նվիրված էր Արցախի Հանրապետության հռչակման 28-րդ տարեդարձին, իսկ ես տունդարձի ճամփան բռնեցի: Ինձ մոտեցավ դպրոցի տնօրեն Գուրգեն Դուլյանը և առաջարկեց մտնել իր առաձնասենյակը: Այնտեղ էին Իվանյանի գյուղապետ Բորիս Ղահրամանյանը և հյուրեր, որոնց չէի ճանաչում: Տնօրենը կոնյակի շիշը բացեց, բաժակները լցրեց և բաժակ բարձրացնելով՝ ասաց. «Ընկեր Շահնազարյան, Ձեր ծննդյան 90-ամյակին ամբողջ կոլեկտիվը չի կարողացել ներկայանալ, քչերն են մասնակցել, բայց կոլեկտիվը որոշել է 90-ամյակը շնորհավորել նոր ուսումնականի Առաջին զանգին: Խնդրում եմ բարձրանաք ուսուցչանոց, որտեղ ուսուցիչներն են սպասում»:

Սա ինձ համար մեծ անակնկալ էր: Տոնական սեղանի շուրջը շնորհավորական բաժակներ բարձրացնելուց հետո ամբողջ կոլեկտիվով լուսանկարվեցինք: Իսկ վերջում ինձ ճանապարհեցին մի այնպիսի հուշանվերով, որ մինչև կյանքիս վերջը միշտ աչքիս առաջ լինի, միշտ հիշեմ իմ կոլեկտիվին, որտեղ ինձ հետ աշխատողներին քչերն են մնացել:

Սիրելի՛ «Լուսարար», Ձեր միջոցով իմ խորին երախտագիտությունն են հայտնում Իվանյանի Օմիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվին, որի հետ աշխատել եմ ուղի 13 տարի: Ցանկանում եմ առողջություն, դարաբաղյան երկարակեցություն և բեղմնավոր աշխատանք:

Մառլեն ՀԱՆՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող,
20-րդ դարի Սյրեփ,
լավագույն մանկավարժ

ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՇԵՐՈՍԻ ԾՆԵՂՅԱՆ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ

Իսկապես, հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը: Այն ձեռք է բերվում ամեն մի սերնդի հայրենամահանգումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Նժդեհյան հայրենապահության ու հայրենասիրության այս որակներով է կրթվում ու դաստիարակվում այսօր Նորագյուղի Վիտալի Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի յուրաքանչյուր աշակերտ:

Հավատարիմ մնալով ավանդույթին՝ սեպտեմբերի 13-ին դպրոցում կազմակերպվեց նկարչության մրցույթ՝ նվիրված «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր Վիտալի Պետրոսյանի ծննդյան 58-րդ տարեդարձին: Միջոցառումը կազմակերպվել էր դպրոցի միջին և ավագ օղակներում, որին մասնակցելու ցանկություն էր հայտնել 13 աշակերտ: Հուշամրցաշարի կազմակերպիչ Լիդա Հայրիյանը, արձանագրելով մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած աշակերտների թիվը, զարմացավ՝ կրկին՝ ճակատագրական թիվ է սա, թե՛ ուղղակի համընկնում: Չէ՞ որ հերոսին ողջ կյանքի ընթացքում կարծես թե հետապնդում էր 13-ը: Ծնվել է սեպտեմբերի 13-ին, գոհվել՝ ապրիլի 13-ին, Արցախյան ազատամարտի տարիներին պահված օրագրերի թիվը

13-ն է, գյուղի գոհված 13-րդ ազատամարտիկը...

Շուրջ երեք ժամ տևած նկարչության մրցույթին աշակերտներից յուրաքանչյուրն իր նկարում ներդրել է անսահման սեր ու նվիրվածություն չքնաղ արցախյան բնությանը, հարազատ բնօրրանին: Դատելով նկարներից աշակերտներն ամբողջ հոգով ու սրտով կապված են հարազատ ծննդավայրին, որում տեսնում են իրենց ապագան... Նրանք ասես ժառանգել են տաղանդավոր նկարչի բնատուր ձիրքը, ինչը հպարտությամբ են փաստում նաև ուսուցիչները, որ աշակերտներ կան, որոնք ուսման մեջ թերանալով համդերձ՝ հրաշալի նկարում են: Մրցույթի արդյունքների ամփոփմանը ներկա էին դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները, հերոսի հարազատները: Հանձնաժողովի անաչառ զնահատմամբ առաջին մրցանակային տեղը տրվեց Էլեն Ղահրամանյանին, երկրորդ և երրորդ տե-

ղերը համապատասխանաբար զբաղեցրին Մարատ Սարգսյանն ու Վարդուհի Մարդյանը: Հաղթողները պարգևատրվեցին դպրոցի տնօրենի պատվոգրով և հե-



րոսի հարազատների կողմից պատրաստված նվերներով: Նվերների արժանացան նկարչության մրցույթին մասնակցած բոլոր աշակերտները:

Նշենք, որ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Վանյա Պետրոսյանը նախօրոք անցկացրել էր մինի ֆուտբոլի և շախմատի հուշամրցաշարեր: Մինի ֆուտբոլին

մասնակցում էր 5 թիմ, որոնց միջև ծավալված համառ պայքարում առաջին մրցանակային տեղը գրավեց 8-րդ դասարանի թիմը, երկրորդ հորիզոնականում 9-րդ դասարանի թիմն էր, իսկ երրորդում՝ 7-րդ «ա» դասարանի թիմը: Շախմատի հուշամրցաշարին, որն անցկացվեց երկու փուլով, մասնակցում էր 12 աշակերտ: Մրցույթի արդյունքների ամփոփումով պարզ դարձավ, որ դպրոցի շախմատի չեմպիոն է դարձել Արթուր Շահբազյանը, երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են Վլադիմիր Ծատուրյանն ու Վաղիմ Սարգսյանը: Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերն ու աշակերտները պարգևատրվեցին պատվոգրերով, մեդալներով ու նվերներով:

Սրտի խոսքով ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Էրիկ Վարդանյանը, զինղեկ Արթուր Հայրապետյանը, հերոսի եղբայր և մարտական ընկեր Վլադիմիր Պետրոսյանը: Նրանց խոսքն ամփոփեց Լիդա Հայրիյանը՝ կոչ անելով աշակերտներին ուսման մեջ առաջադիմությամբ, մարզական կյանքում ակտիվությամբ, բազմակողմանի զարգացած տաղանդով և հայրենասիրությամբ միշտ ձգտել նմանվել Վիտալի Պետրոսյանին:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՅՈՒՆ

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԳՊՐՈՋԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՇՆԱՐ

Ես կարծում եմ, որ բոլոր քիչ թե շատ արժեքավոր բաները սովորել են ինքնակրթության միջոցով:

Զարլոգ Դարվին

Տնային աշխատանքն աշակերտի ծավալած ուսումնական գործունեությունն է, որը նա կատարում է ինքնուրույն: Այսինքն՝ տնային աշխատանքի կարևորագույն խնդիրներն են աշակերտի ինքնուրույնության ձևավորումն է, որը մեծապես նպաստում է նրա ուսումնաճանաչողական գործունեության ծավալելու կարողության զարգացմանը:

Տնային հանձնարարությունները կատարելիս աշակերտը փորձում է ինքնաստուգման տարբեր ձևեր և ընտրում դրանցից իր համար լավագույնը, բացահայտում է իր հիշողության մակարդակը, ակնկալվող արդյունքին հասնելու համար դրսևորում է ստեղծագործական մոտեցումներ: Այս դեպքում միայն տնային հանձնարարությունների կատարման գործընթացը կդառնա ուսումնառության և ինքնակրթության խթանիչ: Այսինքն՝ տնային աշխատանքն առաջին հերթին ինքնակրթության ճանապարհ է:

ԿԱՐԵՎՈՐ ԳԱՆՎԱՄԱՆՔ. Վերառարկայական ուսումնական կարողությունների և հմտությունների յուրացումը, ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու նկատմամբ հետաքրքրության զարգացումը, ստեղծագործելու փորձի ձևավորումն այն կարևորագույն բաղադրիչներն են, որոնցով պայմանավորված է ինքնակրթության կարողության ձևավորումը: Ինքնակրթության պատրաստ լինելն անհրաժեշտ որակ է սովորողի համար, և այն անհրաժեշտ է ձևավորել դեռևս կրտսեր տարիքից:

Տնային ուսումնական աշխատանքի կազմակերպումը ուսումնադաստիարակչական գործընթացի շղթայում ամենաբարդ օղակն է:

Բազմաթիվ ուսուցիչներ, ծնողներ այն կարծիքին են, որ տնային աշխատանք ընդհանրապես պետք չէ հանձնարարել: Նրանց կարծիքով տնային առաջադրանքները տրվում են, որովհետև ուսուցիչը դասի ընթացքում չի կարողացել իր պարտականությունները կատարել և դա փոխհատուցում է մեծ ծավալով տնային աշխատանքներ հանձնարարելով: Իսկ ուսուցիչների կարծիքով եթե տնային աշխատանք քիչ է հանձնարարվում, մեխանիկորեն նվազում է իր առարկայի դերն ու նշանակությունը:

Ուզում ենք կարևորել ոչ այն, թե ինչ քանակությամբ առաջադրանք է հանձնարարված, այլ այն, թե ինչ է հանձնարարված: Մեր մանկավարժական փորձն ու հատուկ ուսումնասիրությունները մեզ հանգեցրել են այն համոզման, որ անհրաժեշտ է կարևորել տնային աշխատանքի բազմազանությունն ու հնարավորությունները, զննատեղի դրանց դերն ու նշանակությունը դպրոցականի դաստիարակության և ուսումնառության գործում և առավելապես հանձնարարել այն, ինչ զետեղված չէ դասագրքում:

Ի՞նչ են սիրում 6-10 տարեկան երեխաները. ոչ սովորական պատմություններ հորինել... Ուրեմն՝ անհրաժեշտ է նրանց տալ այդ հնարավորությունը՝ գիտակցելով, որ երեխան ոչ թե մեքենա է, որը պարտավոր է կատարել որոշակի աշխատանք, այլ մարդ, որն աշխատանքից ուրախություն և օգուտ է ակնկալում: Ուրեմն՝ տնային աշխատանքներից ամեն դեպքում չի կարելի հրաժարվել: Սակայն անհրաժեշտ է տնային աշխատանքն առաջադրել այն դեպքում, երբ այն խստորեն հիմնավորված է, անհատականացված և հետաքրքիր՝ հաշվի առնելով 2-4-րդ դասարաններում տնային աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները:

Դասակարգելը այն պահանջները, որոնք վերաբերում են ինչպես ուսուցչին, այնպես էլ տնային հանձնարարությունների բնույթին:

Ուսուցիչներին վերաբերող պահանջներ	Առաջադրանքներին ներկայացվող պահանջներ
1. Երաշխավորելի չէ տանը հանձնարարել այն, ինչն արդեն յուրացվել է դասարանում: - Անհրաժեշտ է ստույգ իմանալ, թե ինչ նպատակ է հետապնդում տնային աշխատանքը: - Ուսուցիչը պետք է ինքն իրեն հարց տա՝ ինչու է հանձնարարում այդ աշխատանքը, ինչ նպատակ է հետապնդում այն, ինչ կարողություն է զարգացնելու և այլն:	1. Առաջադրանքի բովանդակությունը պետք է հասկանալի լինի յուրաքանչյուր աշակերտի, այսինքն՝ բոլոր աշակերտները պետք է իմանան, թե ինչ պիտի անեն և ինչպես պիտի անեն:
2. Յուրաքանչյուր առարկայից տրվող տնային առաջադրանքների ծավալը պետք է համապատասխանեցնել այլ առարկաներից տրվող տնային աշխատանքների ծավալին:	2. Առաջադրանքը չի ծառայի նպատակին, եթե դրա հետ միասին չտրվի համապատասխան հրահանգավորում:
3. Տնային աշխատանքի անհրաժեշտությունը պետք է լինի հիմնավորված: Եթե ուսուցիչը տվյալ օրն աշխատանքը կազմակերպել է այնպես, որ սովորողներն ամբողջ ուսումնական նյութը յուրացրել են դասի ընթացքում, ապա կարող է ընդհանրապես տնային աշխատանք չհանձնարարել:	3. Տնային աշխատանքը պետք է անպայման ստուգվի ուսուցչի կողմից:
4. Պահպանելով տնային առաջադրանքի հիմնական բովանդակությունը՝ առանձին աշակերտների համար կարելի է մասնակիորեն անհատականացնել նրա նպատակը, ծավալը, կատարման հնարները:	4. Առաջադրանքը կարող է լինել տարբեր՝ հանրահամար կամ համադասարանային, տարբերակված, անհատական և այլն. տեսակն ընտրելիս պետք է հաշվի առնել դասարանի ընդհանուր առանձնահատկությունները:
5. Տնային աշխատանքների կատարման ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի 2-րդ դասարանում 1,2 ժամը, իսկ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ 1,5 ժամը:	5. Առաջադրանքը չպետք է լինի միօրինակ. անհրաժեշտ է ներառել ոչ ստանդարտ հարցեր, դիտարկումներ կատարելու պահանջներ և այլն:
6. Մեկ ուսումնական առարկայից տնային աշխատանքի կատարման վրա ծախսվող ժամանակը չպետք է գերազանցի 2-րդ դասարանում՝ 20 րոպեն, իսկ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ 30 րոպեն:	6. Առաջադրանքը պետք է կողմնորոշի սովորողներին ինքնուրույն որոշումներ կայացնելուն, հարստացնի նրանց գիտելիքները, զարգացնի կիրառելու կարողությունները:
7. Տնային աշխատանքի ծավալը չպետք է գերազանցի դասարանում կատարած աշխատանքների 30%-ը:	7. Առաջադրանքներում պետք է ընդգրկվեն այնպիսի հարցեր, որոնք կնպաստեն ծրագրի հիմնական բաժինների կրկնությանը:
8. Դասագրքում զետեղված բարդ առաջադրանքները, որոնք առանձնացված են աստղանիշով կամ մեկ այլ տարբերակիչ նշանով, չի կարելի հանձնարարել տանը:	8. Ըստ բարդության աստիճանի՝ տնային աշխատանքը պետք է լինի մոտավորապես նույնը կամ փոքր-ինչ ավելի դյուրին այն առաջադրանքներից, որոնք կատարվել են դասի ընթացքում:
	9. Առաջադրանքները կատարելիս աշակերտները կարող են հանդիպել որոշակի դժվարությունների: Դրանք պետք է հասանելի լինեն նրանց կարողություններին: 10. Առաջադրանքները պետք է աշակերտից պահանջեն համեմատել, վերլուծել, ընդհանրացնել, դասակարգել, հաստատել պատճառահետևանքային կապերը, ձևավորել եզրահանգումը, յուրացրած գիտելիքները կիրառել նոր իրավիճակում:

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ տնային աշխատանքները հաճախ նախապես չեն պլանավորվում: Մեր երկարատև մանկավարժական փորձն ու ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնականում դա է տնային աշխատանքների միօրինակության և ծանծաղի բնույթի պատճառը: Բայց եթե նպատակադրվում է դպրոցականի անձնային որակների, չափորոշում սահմանված որոշակի կարողությունների զարգացումը, ապա անհրաժեշտ է մշակել երկարատև ռազմավարություն, այսինքն՝ պետք է նախապես պլանավորել մի շարք տնային աշխատանքներ: Այն ամբողջ ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտ բաղադրիչ մասն է և անմիջականորեն պայմանավորված է ուսումնական գործընթացի նպատակներով:
Փորձը ցույց է տալիս, որ կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են տնային աշխատանքների կատարման ընթացքում որոշակի դժվարությունների առաջացմանը:
Դրանք են՝
* Աշակերտները տնային աշխատանք-

քի կատարման ընթացքում չեն անդրադառնում հանձնարարությանն առջևդրված թեմային, մեխանիկորեն կարդում են առաջադրանքը՝ առանց հասկանալու դրա իմաստը: Ավելին, չեն կատարում ինքնաստուգում:
* Աշակերտները ճիշտ չեն պլանավորում տնային առաջադրանքների կատարման աշխատանքային ժամերը: Դա հանգեցնում է առաջադրանքների հապճեպ կատարմանը և ուսումնասիրվող նյութի մակերեսային յուրացմանը:
* Գրավոր տնային աշխատանքը շատ դպրոցականներ կատարում են առանց նախնական տեսական նյութի յուրացման կամ կրկնության (անդրադարձի): Այդ պատճառով էլ նրանք թույլ են տալիս էական սխալներ:
* Դժվարություններ են ծագում նաև, երբ սովորողները ծանրաբեռնված են լինում տնային առաջադրանքներով:
* Կատարման արդյունքի վրա բացասաբար է ազդում նաև սովորողների կարողություններին անհամապատասխան առաջադրանքների հանձնարարումը:

* Ծանրաբեռնվածությունը հաճախ պայմանավորված է ոչ միայն հանձնարարված տնային աշխատանքի ծավալով, այլև սովորողների նախապատրաստվածության մակարդակով:

Զնոռանք, որ 2- 4-րդ դասարաններում տնային աշխատանք նպատակահարմար չէ հանձնարարել հանգստյան, տոնական օրերին և արձակուրդներին:

ԽՈՐՀՈՒՐԳ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Գոյություն ունեն մի շարք կանոններ, որոնք կօգնեն աշակերտներին՝ ճիշտ կատարելու տնային աշխատանքները:

Առաջին. սովորողները պետք է իմանան, որ գիտելիքների յուրացումն ու իմաստավորումը պետք է կրի կենտրոնացված բնույթ: Սա նշանակում է, որ ծրագրային նյութի ամբողջական իմաստավորման և խորությամբ յուրացման համար անհրաժեշտ է սովորել դասերը ոչ թե «մի հայացքով», այլ որոշակի ժամանակի ընթացքում՝ մի քանի անգամ անդրադառնալով ուսումնասիրվող նյութին:

Երկրորդ. տնային աշխատանքն անհրաժեշտ է կատարել հանձնարարված օրը, որովհետև դասի ընթացքում ընկալված նյութը մոռացվում է առաջին 10-12 ժամվա ընթացքում: Հետազոտությունները ցույց են տվել, որ նյութի ուսումնասիրումից մեկ ժամ հետո աշակերտները մոռանում են դրա 44%-ը, իսկ 2,5-8 ժամ հետո՝ միայն 28%-ը:

Երրորդ. նախապատրաստվելով տնային աշխատանքի կատարմանը՝ անպայման անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական տրամադրվածություն այն ճիշտ կատարելու և ուսումնասիրվող նյութը գիտակցորեն և ստեղծագործելով յուրացնելու համար: Ինչպե՞ս դա անել: Պետք է մանրակրկիտ մշակել այն քայլաշարը, որն անհրաժեշտ է տնային աշխատանքի կատարման համար. հստակեցնել տնային աշխատանքի կատարման նպատակը, չչտապել ու ջանալ այնպես ուսումնասիրել, որ տվյալ նյութը խորապես իմաստավորվի և յուրացվի:

Չորրորդ. եթե տնային առաջադրանքը ներառում է դասագրքում զետեղված ուսումնական նյութի յուրացումը, ապա դրա կատարումը պետք է սկսել տվյալ թեմայի ուսումնասիրումից. մասի պետք է մտաբերել այն, ինչ մնացել է հիշողության մեջ: Հետո անհրաժեշտ է ուշադիր ընթերցել դասագրքի նյութը՝ առանձնացնելով գլխավորը, կատարելով եզրահանգումներ, ձգտելով նյութի խոր յուրացմանն ու իմաստավորմանը: Դրանից հետո պետք է կիրառել վերադասարանում և ինքնաստուգման հնարները. նյութի պատմում, ընթերցածի պլանի կազմում, դասագրքի մեթոդական կառույցի հարցերի պատասխանում և այլն: Եթե ինքնաստուգման ընթացքում ծագում են դժվարություններ, անհրաժեշտ է մեկ անգամ ևս աշխատել դասագրքով:

Ինչպես նշեցինք, 2-4-րդ դասարաններում տնային առաջադրանքները հիմնականում կազմակերպվում են **համադասարանային, տարբերակված, անհատական, խմբային** ձևերով:

Համադասարանային տնային աշխատանքն ամենատարածվածն է: Այդպիսի աշխատանքների անընդհատ կիրառումը չի նպաստում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, այնուամենայնիվ, դրանք բացառել պետք չէ, քանի որ դրանց կատարման ընթացքում մշակվում են զանազան հմտություններ, ձևավորվում են անհրաժեշտ կարողություններ:

Անհատական տնային աշխատանքը տրվում է որպես կանոն դասարանի առանձին աշակերտներին՝ որոշակի նպատակով: Այս դեպքում ուսուցչի համար դժվար չէ ստուգել տվյալ աշակերտի յուրացրած գիտելիքների ու կարողությունների մակարդակը: Այսպիսի աշխատանքը կարող է կատարվել քարտերի վրա կամ աշխատանքային տետրում: Անհատական տնային աշխատանքները տրվում են, որպեսզի վերացվեն այն բացթողումները, որոնք ունեն որոշ սովորողներ առանձին թեմաների ուսումնասիրման արդյունքում:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԳՊՐՈՋԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՀՆԱՐ

Գրանք գործնական կարողությունների ու հմտությունների մշակմանը նպաստող մարզողական վարժություններ են: Անհատական տնային աշխատանքները կարող են տրվել բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին ստեղծագործական կարողություններ ու հակումներ զարգացնելու նպատակով:

Խմբային տնային աշխատանքի կատարման ընթացքում սովորողների որոշակի խմբեր կատարում են ինչ-որ առաջադրանք, որն ընդհանուր դասարանին տրվող առաջադրանքի մասն է: Օրինակ՝ «Գին: Քանակ: Արժեք» թեմայի ուսումնասիրման ընթացքում առաջադրվում է տեղեկություններ ձեռք բերել տարբեր ապրանքների գների մասին. առաջին խումբը տեղեկանում է գրեական պիտույքների գների մասին, երկրորդ խումբը՝ խաղալիքների, երրորդ խումբը՝ մթերքների: Այս դեպքում տնային առաջադրանքը նախապատրաստում է սովորողներին այն աշխատանքին, որը պետք է անցկացվի դասի ընթացքում: Այդպիսի առաջադրանքները նպատակահարմար է հանձնարարել նախապես՝ պլանավորելով այն ժամանակահատվածը, որի ընթացքում սովորողները պետք է ավարտեն հանձնարարությունը: Սա փաստորեն նախագծային աշխատանքի մի տարբերակ է, որը նպաստում է ինքնուրույն-որոնողական գործունեություն ծավալելու կարողության ձևավորմանը:

Տարբերակված տնային աշխատանքի մոտեցման հիմքը կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է, որն իրագործվում է տարբերակված առաջադրանքների միջոցով: Տնային աշխատանք հանձնարարելիս ամեն անգամ հարց է ծագում. ո՞ւմ ներուժը հաշվի առնել տնային աշխատանքի հանձնարարելիս՝ ուժեղ, միջին, թե՞ թույլ աշակերտի: Համախառն ուսուցիչներն առաջադրում են տնային աշխատանքներ միջին աշակերտի մակարդակով, որովհետև եթե հանձնարարվի առաջադրանք թույլ աշակերտի մակարդակով, ապա ուժեղն այն կկատարի շատ արագ և չի ապրի այն իրձվանքը, որը կունենա իր ներուժին համապատասխան աշխատանք կատարելիս: Իսկ եթե հանձնարարվի ուժեղ աշակերտի մակարդակով, ապա թույլ աշակերտը դրա վրա կկորցնի ավելի շատ ժամանակ, որը, բնականաբար, վատ կանդրադառնա նրա ինքնագզացման վրա. նա կկորցնի վստահությունն իր ուժերի նկատմամբ: Միևնույն առաջադրանքը ուժեղների համար կարող է լինել հեշտ, իսկ թույլերի համար՝ բարդ: Արդյունքում ոչ մեկի, ոչ էլ մյուսի մոտ չի դրսևորվի պատասխանատվություն տնային հանձնարարությունների կատարման նկատմամբ: Տվյալ խնդրի իրականացման հիմնական ուղին տարբերակված մոտեցման ցուցաբերումն է տնային աշխատանքն առաջադրելիս: Ծավալի և բովանդակության նկատմամբ տարբերակված մոտեցումն իրականացվում է սովորողների առանձնահատկությունների և ճանաչողական հնարավորությունների հաշվառմամբ: Միայն այս դեպքում է կատարվում գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդում, տրամաբանական մտածողության, ինքնուրույնության ձևավորում, ուսումնառության նկատմամբ պատասխանատվության զգացումի վերահսկում:

Փաստորեն տարբերակված տնային աշխատանքն առաջադրելիս հաշվի են առնվում յուրաքանչյուր անձի անհատական առանձնահատկությունները (ընդունակություններ, հետաքրքրություններ, մտավոր գործունեության առանձնահատկություններ և այլն): Տնային աշխատանքի ստուգման գործընթացն ունի որոշ առանձնահատկություններ. պետք է մշտադիտարկել ոչ միայն յուրաքանչյուր աշակերտի տնային աշխատանքի կատարման բարեխղճությունը, այլև ինքնուրույնությունը և ուսումնական նյութի յուրացման մակարդակը:

Տնային աշխատանքի ստուգումը կարող է կատարվել և դասի սկզբում, և դասի ընթացքում, և դասի վերջում՝ այն համապատասխանեցնելով դասի փուլերին: Ստուգման ձևի ընտրությունը պայմանավորված է տնային առաջադրանքի տեսակով, նպատակով և դասի բովանդակությամբ:

Տնային աշխատանքը կարելի է ստուգել տարբեր եղանակներով: Դիտարկենք նրանցից մի քանիսը.

1. Առավել տարածված է տնային աշխատանքի համադասարանային ստուգումը: Ուսուցիչը տնային աշխատանքի բովանդակության շուրջ ստուգում է ամբողջ դասարանին. տալիս է ընդհանուր հարց, աշակերտները տալիս են համառոտ պատասխան, նշում են դժվարությունները, որոնք իրենց հանդիպել են աշխատանքը կատարելիս: Ուսուցիչը բացատրում և շտկում է սխալները, ընդհանրացնող ամփոփում է կատարում:

2. Անհատական ստուգումը ենթադրում է մեկ կամ մի քանի աշակերտների բանավոր հարցում, որի ընթացքում մյուս աշակերտները հետևում են պատասխաններին, անհրաժեշտության դեպքում՝ լրացնում:

3. Ընտրովի ստուգման դեպքում ուսուցիչը հանձնարարությամբ աշակերտներից մեկը ներկայացնում է իր աշխատանքը (գրելով գրատախտակին, կարդալով և այլն), իսկ մյուսները այդ պատասխանի հիման վրա ստուգում են իրենց աշխատանքները: Եթե ուսուցիչը բացահայտում է, որ ներկայացնող աշակերտը կատարել է որևէ սխալ, ապա հարցնում է, թե ում մոտ է այլ կերպ գրված և դասարանի օգնությամբ պարզաբանում է, թե ինչպես կարող են ճիշտ կատարել:

4. Որոշ դեպքերում տնային աշխատանքի ստուգման փոխարեն սովորողներին տրվում են նույնատիպ վարժություններ: Դրանց կատարման մակարդակով կարելի է հայտնորոշել տնային աշխատանքի որակը:

5. Կարելի է ստուգել նաև ամուղղակիորեն՝ թեստերի, այլ բնույթի ինքնուրույն տրված աշխատանքների միջոցով. այնպիսի առաջադրանքների, որոնց բովանդակության մեջ ընդգրկված են նյութեր, որոնք համարժեք են տված տնային առաջադրանքներին:

6. Ստուգման մի ձև էլ դասի ընթացքում աշակերտի ակտիվությունն է, եթե այդ ակտիվության պատճառը տնային աշխատանքի կատարումն է:

7. Ստուգման կարևոր ձև է փոխադարձ ստուգման կազմակերպումը: Դասարանի բոլոր աշակերտների ներգրավումը տնային աշխատանքի ստուգման գործընթացում, սխալների, դրանց վերացման ուղիների քննարկումը նպատակահարմար է, քանի որ այն յուրաքանչյուր աշակերտի տալիս է պատկերացում յուրացման և հնարավոր դժվարությունների հաղթահարման մասին: Հայտնի է, որ շատ սովորողներ ավելի հեշտությամբ սխալներ են գտնում ուրիշի աշխատանքում, քան իրենց: Փոխստուգման անցկացումն առաջին հերթին կրում է դաստիարակչական բնույթ, բարձրացնում է սովորողների պատասխանատվությունը, նպաստում է ինքնագնահատման բարձրացմանը:

Եթե որևէ աշակերտ չի կատարել տնային աշխատանքը, ապա ուսուցիչը պետք է անպայման բացահայտի դրա պատճառները: Դրանք կարող են լինել ամենատարբեր բնույթի: Այն դեպքում, երբ պարզվում է, որ առաջադրանքը բարդ է, պետք է պարզել, թե ինչու է դժվարացել, և ինչպես կարելի է այն հարցախառնել:

Եթե տնային առաջադրանքը ուսուցիչը ոչ միշտ է դասապահում առանձնացնում առանձին կետով, ապա տնային աշխատանքի ստուգումը դասի մի մասն է, և այն անհրաժեշտ է անպայման ներառել օրվա դասապահումում:

«Մայրենի» դասընթացի շուրջ կարող են հանձնարարվել տնային աշխատանքի հետևյալ ձևերը.

Կարող է բաղկացած, յուրաքանչյուր մասի համար մշակել հարցեր և պատասխանել դրանց, դասագրքում գետեղված հարցերով լրացնել մշակվածը, առանձնացնել տեքստից հենակետային բառերը, որոնք անձանոթ բառերի բացատրությունը բառարաններում, վերարտադրել տեքստը՝ հենվելով միայն հենակետային բառերի վրա, ըստ հենակետային բառերի նյութը ներկայացնել տրամագրով կամ մշակել քայլաշար և այլն:

Կարող են նաև առաջադրվել ոչ ստանդարտ բովանդակությամբ տնային առաջադրանքներ.

1. եզրույթների բառարանի ինքնուրույն կազմում՝ դրանք դասդասելով ըստ թեմատիկայի,

2. դասագրքի տեքստի հետազոտում, 3. խնդիրների ինքնուրույն կազմում, 4. ցուցադրական միջոցների, աղյուսակներ-

են երկարատև ինքնուրույն աշխատանք (նախագծեր, ստեղծագործական աշխատանքներ և այլն):

Մենք առաջարկում ենք հետևյալ տնային առաջադրանքների ձևերը		
	Երկրորդ դասարան	Չորրորդ դասարան
Թեմա	ՈՐ ՄԵԿԱ ԿԱՄԱԶԻ (ժողովրդական գրույց) Երկու ընկեր գնում են անապատով: Մեկը շատ է ծարավում, ուժասպառ ընկնում է ավազներից: Մյուսը ջուր ունենում է, բայց չի տալիս ընկերոջը, թողնում գնում է: Մի քարավան է անցնում այդ կողմերով: Տեսնում են ուշագնաց տղային, ջուր են տալիս: Տղան ոտքի է կանգնում, գնում հասնում է ընկերոջը: Ոչինչ չի ասում նրան: Միասին շարունակում են ճանապարհը: Ջուր չտվող ընկերը հանկարծ սայթաքում է, ընկնում ու ոտքը կտրում: Մյուս ընկերը շալակում է նրան ու հասցնում քաղաք: - Դե, մնա քարով,- ասում է նա:- Քանի դեռ ապրում ենք, դու քո ջրից խոսի, ես՝ իմ շալակելուց: Տեսնենք՝ որ մեկս կամաչի:	ՄԱՅՐԱ (Դովհաննես Շիրազ) Մեր հույսի դուռն է մայրս, Մեր տան մատուռն է մայրս, Մեր օրորոցն է մայրս, Մեր տան ամրոցն է մայրս, Մեր հերն ու մերն է մայրս, Մեր ճորտն ու տերն է մայրս, Մեր տան անտունն է մայրս, Մեր արծվաբույնն է մայրս, Մեր տան ծառան է մայրս, Մեր տան արքան է մայրս, Մեր դեղն ու ճարն է մայրս, Մեր տան աղբյուրն է մայրս, Մեր ծարավ քույրն է մայրս, Մեր տան անքունն է մայրս, Մեր անուշ քունն է մայրս, Մեր տան ճրագն է մայրս, Մեր արեգակն է մայրս: Մայրս, մեր հացն է մայրս, Մեր տան Աստվածն է մայրս....
	Տնային առաջադրանք. 1-ին տարբերակ - Տալ 4 խումբ հենակետային բառեր, որոնցով նրանք պետք է կազմեն նախադասություններ. ա/ ուժասպառ, ավազներին, անապատով, բ/ քարավան, ուշագնաց, ոտքի է կանգնում, ընկերոջը, գ/ սայթաքում է, շալակում է, դ/ ջրից, շալակելուց, որ մեկս կամաչի: ԾԱՆՈՒԹՅՈՒՆ. 2-րդ դասարանի աշակերտները գիտեն նախադասության՝ որպես լեզվական նախագիտելիքի մասին, սակայն ավելի մանրամասն կուսումնասիրեն 2-րդ դասարանի տարվա վերջին: Այդ առումով ցանկալի է կիրառել նախադասություն կազմելու «Խճանկար» մեթոդը:	Տնային առաջադրանք 1-ին տարբերակ Կազմել բառակապակցություններ՝ գոյականների կողքին գրելով փոխաբերական իմաստ արտահայտող մեկական ածական: Երկինք, արև, թռչուն, քամի, ամպ, միտք, գիտելիք, ծիածան, խնձորենի, դեղձ, երեկո, արջ, խոզ, եղանակ, փաթիլ, մանուշակ, կակաչ, կաղնի: ԾԱՆՈՒԹՅՈՒՆ. Այս առաջադրանքը համապատասխանում է դասագրքի մեթոդական կառույցի առաջին առաջադրանքին, զարգացնում է աշակերտների տարածական մտածողությունը, հարստացնում է նրանց ակտիվ բառապաշարը:
	2-րդ տարբերակ -Աշակերտները համակարգչի միջոցով պետք է ստեղծեն անապատի մասին փոքրիկ տեսանյութ: ԾԱՆՈՒԹՅՈՒՆ. Այդ գործընթացը նրանց հետաքրքրությունների շրջանակների մեջ է:	2-րդ տարբերակ Առ. 4. Ստեղծել եզրույթների բառարան՝ ըստ թեմատիկայի. Մատուռ, ամրոց, ճորտ, դեղ ու ճար, ճրագ, արծվաբույն: ԾԱՆՈՒԹՅՈՒՆ.
	3-րդ տարբերակ -Հանձնարարել բերել տերև: ԾԱՆՈՒԹՅՈՒՆ. Այս առաջադրանքի հիմնական նպատակը լեզվական «Արմատ» նյութի ուսուցման նպատակ ունի: «Տերև» արմատով կկազմվեն նոր բառեր: Տերևը, որպես դիտողական պարագա, կարևոր դեր կունենա նաև նոր՝ «Կապույտ տերևներ» նյութի ուսուցման համար:	3-րդ տարբերակ Մոր մասին առած-ասացվածքների հավաքում և ֆիլմի կազմում: ԾԱՆՈՒԹՅՈՒՆ. Այս առաջադրանքի ինքնուրույն կատարումը սովորողների հետաքրքրությունների շրջանակում է: Նրանք սիրում են օգտվել համացանցից:
	4-րդ տարբերակ -Ստեղծել եզրույթների բառարան (անապատ, ուշագնաց, քարավան, սայթաքել) ԾԱՆՈՒԹՅՈՒՆ. Նոր բառերի դուրս գրումը աշակերտներին հնարավորություն կտա այդ բառերը նրանց գործուն բառապաշարի մեջ ընդգրկելուն:	4-րդ տարբերակ «Մայր Հայաստան» հուշարձանի մասին տեղեկության ձեռքբերում ԾԱՆՈՒԹՅՈՒՆ. Այս առաջադրանքը նույնպես սովորողների հետաքրքրությունների շրջանակում է և նպաստում է նրանց ճանաչողական կարողությունների զարգացմանը:

րի, գծագրերի քայլաշարերի, համառոտագրերի մշակում,

5. կանոնների նոր տարբերակների մշակում, ձևակերպում և այլն,

6. թեստերի, առաջադրանքների, փոխստուգման համար քարտերի նախապատրաստում,

7. տեքստերի խմբագրում,

8. թույլ տված սխալների ուղղում,

9. նախապատրաստում ուսումնասիրվելիք թեմայի, տեղեկատվության որոնում, հատվածների, հոդվածների որոնում,

10. հետազոտական, ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք ենթադրում

Այսպիսով, տնային աշխատանքները նպաստում են աշակերտների ինքնուրույն աշխատանք կատարելու կարողության զարգացմանը, ինքնարտահայտմանը, տարատեսակ ուսումնական գործունեություն կատարելու միջոցով ինքնադրսևորմանը: Այդպիսի տնային աշխատանքների կատարման ընթացքում մշակվում են նաև բառարանից, լրացուցիչ և տեղեկատու գրականությունից օգտվելու կարողություններ, ձևավորվում է որոնողական հետազոտական գործունեություն ծավալելու կարողություն:

Աննա ԴԵՏՐՈՍՅԱՆ ԱՅ ԿԳՍ Նախարարություն, Մեսրոպ Մաշտոց Համալսարան

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՏԻՐԱՊԵՏԱՆ ԸՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում օտար լեզուներին իմացությունը պարզապես անհրաժեշտություն է: Այն անձին տալիս է մի շարք առավելություններ: Նախ մարդուն հնարավորություն է տալիս ծանոթանալ մի այլ օտար մշակույթի հետ. չէ՞ որ լեզու ուսումնասիրելիս մարդը ծանոթանում է նաև տվյալ մշակույթին, պատմությանը, արվեստին: Այնուհետև նրա առջև բացվում են մի շարք հնարավորություններ, ինչպիսին են արտասահմանում կրթություն ստանալը, աշխատանքի ընդունվելը, քանզի ներկայիս գործատուների առաջնային պայմաններից մեկը հենց օտար լեզուների իմացությունն է և վերջում, ինչու չէ, բնագործ գործերի ընթերցանությունը:

Եվ այս հանգամանքներում ներկայումս գրեթե բոլորը, հատկապես՝ երիտասարդները, ցանկանում են տիրապետել ամենավազմ մեկ օտար լեզվի: Այսպիսով, օտար լեզվի ուսումնասիրության ցանկության հետ մեկտեղ առաջ են գալիս օտար լեզուն յուրացնելու դժվարությունները: Ես ինքս ուսումնասիրել եմ լեզուներ և հնարավորություն եմ ունեցել 6 ամսով կրթություն ստանալ Ֆրանսիայում, որտեղ տեսել եմ, թե ինչ մեծ դեր են տալիս մոտիվացիային օտար լեզուների ուսումնասիրման ժամանակ: Ես նույնպես գտնում եմ, որ ամեն բնագավառում մոտիվացիան կարևոր դեր ունի, և վստահորեն կարող եմ ասել, որ օտար լեզվի ուսումնասիրությունը առանց մոտիվացիայի գրեթե անհրաժեշտ է: Օտար լեզվի ուսումնասիրությունը երկար, ժամանակատար ընթացք է, որը պահանջում է լուրջ ջանքեր, աշխատասիրություն և մի քիչ էլ համառություն: Եթե սովորողը չունենա նպատակ և մոտիվացիա, նա ամեն պահ կարող է հետ կանգնել լեզուն սովորելու մտքից:

Սովորողները կարող են ունենալ մոտիվացիայի տարբեր աղբյուրներ: Մեկի համար դա կարող է տվյալ լեզվով հաղորդակցվելը լինել, մյուսի համար՝ օտար լեզվով իր սիրելի երաժշտությունը լսել ու հասկանալը, իսկ մի երրորդ անձի համար՝ օտար լեզվով ֆիլմերի դիտումը: Մի խոսքով, յուրաքանչյուրը պետք է ունենա իր մոտիվացիան:

Իսկապես անհերքելի է այն փաստը, որ օտար լեզու սովորելը հեշտ ընթացք չէ: Բայց կան բազմակի մշակված միջոցներ, որոնք օտար լեզու սովորելն ավելի մատչելի են դարձնում:

Իսկ հիմա փորձենք հասկանալ, թե որտեղից պետք է սկսել: Նախ, ինչպես արդեն նշվել է, ամենակարևորն պետք է ունենալ մոտիվացիա և նպատակ (ի դեպ, հենց նպատակից է կախված,

թե որտեղից սկսել): Օտար լեզու ուսումնասիրելը կարող է հետապնդել տարբեր նպատակներ՝ սիրողական, մասնագիտական, աշխատանքային և այլն: Օրինակ՝ եթե սովորողը նպատակ ունի մեկնել արտերկիր աշխատանքային այցով և ունի ընդամենը վեց ամիս, որպեսզի տիրապետի լեզվին և եթե նա պետք է հավասարապես տիրապետի և՛ լեզվին, և՛ լեզվի քերականությանը՝ նպատակ ունենալով ընդունվել օտար լեզվի բանասիրության ֆակուլտետ, ապա այս երկու դեպքերի համար երկու տարբեր մոտեցումներ են պետք: Ուստի շատ կարևոր է ունենալ հստակ նպատակ:

Մենք սովոր ենք կարծել, թե օտար լեզուների ուսումնասիրությունը պետք է սկսել անպայման քերականությունից, բայց երբևիցե չենք մտածել, որ մեր մայրենի լեզվում քերականությունը ամենավերջինն է, որ երեխաները յուրացնում են: Ուստի պետք է փորձել լեզուն յուրացնել հնարավորինս բնական ճանապարհով՝ հետևյալ հմտությունների միջոցով. **լսել, խոսել, ընթերցել և վերջում՝ գրել:**

1. Յուրաքանչյուր լեզվում լսելը պահանջում է ուշադրություն և կենտրոնացում: Որոշ մարդկանց համար այս հմտությունը պահանջում է ավելի շատ ջանքեր, քան մյուս հմտությունները: Մարդիկ, որոնք դժվարությամբ են կենտրոնանում, հիմնականում ձախողվում են օտար խոսքը լսելիս և ճիշտ ըմբռնելիս: Լսելը կարելի է զարգացնել՝ լսելով տարբեր ձայնագրություններ և ամենակարևորը՝ հնարավորինս հաճախ լսել տարբեր տոնայնության և առողջանության ձայներ: Լսողական վարժությունները նաև ընդարձակում են սովորողի բառապաշարը: Լսելը ոչ միայն օգնում է հասկանալ, թե մարդիկ ինչ են ասում մեզ, այլ նաև մեզ օգնում է հստակ խոսել այլ մարդկանց հետ:

2. Շատերը կարծում են, թե իրենք տիրապետում են օտար լեզվին, բայց երբ օտար լեզվով խոսելու ժամանակն է գալիս, հայտնվում են դժվար իրավիճակներ և չեն կարողանում արտահայտել իրենց մտքերը: Նախ պետք է հասկանալ, որ խոսելը լեզվի առանձին հմտություն է, որը պետք է առանձին զարգացնել, իսկ դրա բարելավման միակ միջոցը հենց «սկսել խոսելն» է: Այս պարագայում գործում է ուժեղ հոգեբանական խնդիր՝ սխալվելու խնդիրը, այսինքն՝ սովորողը հոգեբանորեն պատրաստ չէ սխալ թույլ տալ: Բայց պետք է գիտակցել, որ երբեք և երբևիցե որևէ մեկը չի սկսել միանգամից անթերի օտար լեզվով խոսել: Ակզբում, ինչպես արդեն

նշվել է, պետք է խոսել, անգամ եթե ցանկանում եք մի միտք արտահայտել և վստահ չեք՝ կստացվի՞ գտնել բոլոր անհրաժեշտ բառերը, թե ոչ: Մի վարանք, դուք խոսեք, դիմացի լեզվակիրը ձեզ նույնիսկ կօգնի կիրառել ամենից պատշաճ բառը տվյալ միտքն արտահայտելու համար:

3. Ընթերցանությունը հմտություն է, որի միջոցով սովորողն ստանում է բավականին ինֆորմացիա տվյալ օտար լեզվից: Այն օգնում է հարստացնել բառապաշարը, յուրացնել տվյալ լեզվի լեզվաբանական կառույցները և նույնիսկ եթե ընթերցել բարձրաձայն, ապա նաև մեկտեղ զարգացնել լսելու հմտությունը: Որպեսզի ընթերցողի համար ծանծրալի կամ դժվար չլինի, նախ պետք է սկսել հեշտ գրականությունից և ընթերցել այն ժանրով, որը նախընտրում է մայրենի լեզվում:

4. Եվ վերջում գրելը՝ որպես լեզվի հմտություն: Պարզ գրելու համար անհրաժեշտ է հասկանալ լեզվի հիմնական համակարգը, որը ներառում է քերականության, կետադրության և նախադասությունների կառուցվածքի իմացություն: Այս հմտությունը զարգացնելու համար նախընտրելի է սկսել արտագրությունից, թեև արդյունքից և վերջում արդեն փորձել գրել շարժողություն: Ժամանակակից աշխարհում այս հմտությունը շատ կարևոր է, քանի որ այն համարվում է հաղորդակցման գրավոր միջոց:

Սակայն յուրաքանչյուր սովորող իր համար պետք է մշակի լեզուն սովորելու յուրովի միջոց՝ հաշվի առնելով իր թույլ և ուժեղ կողմերը: Օրինակ, եթե սովորողն ունի լավ տեսողական հիշողություն, նա, կոպիտ ասած, պետք է դրանից օգտվի. շատ ընթերցի և այդ կերպ յուրացնի հարուստ բառապաշար կամ էլ հակառակը. եթե սովորողն ունի լավ լսողական հիշողություն, ապա նա պետք է փորձի հնարավորինս շատ լսել օտար խոսքը:

Այսպիսով, օտար լեզվի կատարյալ տիրապետելու համար սովորողը պետք է աշխատի յուրացնել վերը նշված հմտությունները՝ միաժամանակ փորձելով զուգահեռներ տանել բոլոր չորս հմտությունների միջև, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կապված է մեկը մյուսի հետ:

Քրիստինա ԱՐԱՐԱՍՅԱՆ
Ֆրանսերեն լեզվի դասավանդող
Պոլ Էյուարի Տուն Ֆրանկոֆոնիայի կենտրոնում

Շնորհավորանք
ՆԿԻՐՅԱԼ
ՄԱՆԿԱՎԱՐԺ



Յուրաքանչյուր պետության հիմքը եղել է մնում է դպրոցը, իսկ լավ կրթությամբ կայանում է նվիրյալ ու բանիմաց մանկավարժներով: Կան մանկավարժներ, որոնց կյանքի իմաստը իրենց մասնագիտությունն է:

Վերը նշվածի լավագույն օրինակ է Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 մ/հ դպրոցի պատմության ուսուցչուհի Սոֆյա Գաբրիելյանը:

1978-1982թթ. նա սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: Սկզբում աշխատել է ԼԴԽՄ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունում: 1993թ. մտել է մանկավարժության ասպարեզ, սկզբում Մ. Մաշտոցի հ. 4 դպրոց, իսկ 2009-ից՝ հ. 8 դպրոց: Փորձառու ուսուցչուհին հայրենասերի վեհ կեցվածքով ուսուցանում է հայ ժողովրդի փառավոր անցյալը, մեր նախնիների սխրագրերը:

Ստեփանակերտի հ. 8 մ/հ դպրոցի ողջ ուսուցչական կոլեկտիվը շնորհավորում է իր սիրելի գործընկերոջը 60-ամյա հորեյկանի առթիվ, մաղթում երկար տարիների կյանք, քաջառողջություն, բեղմնավոր գործունեություն:

Ստեփ. Ա. Սախարովի անվան հ. 8 մ/հ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՆԿԻՐՎԱԾ ԱՆԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ Ե

Արդեն տասներորդ տարին է՝ սեպտեմբերի 17-ն Արցախում նշվում է որպես Ֆիզկուլտուրնիկի օր: Տոնը վկայությունն է այն փաստի, որ Արցախի Հանրապետության կառավարությունը վերջին տարիներին որդեգրել է սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման նոր ազամավարություն:

Ջրուցակիցս Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ղաթիբ Ահարոնյանն է, որն իր երկարամյա գործունեության ընթացքում աշակերտների մեջ սերմանել է սեր և հավատ ֆիզկուլտուրայի ու սպորտի նկատմամբ՝ նպաստելով նրանց առողջության ամրապնդմանը:

Ղաթիբ Ահարոնյանն իր մարզիկների հետ միասին բազում հաջողություններ է գրանցել այս տարիների ընթացքում, որոնց շարքն այսօր էլ շարունակվում է:

Սպորտը մեր կյանքի կարևորագույն բնագավառներից է, մեր գրույցի սկզբում ասաց Ջրուցակիցս՝ տոնի կապակցությամբ շնորհավորելով Արցախի մարզաշխարհի ներկայացուցիչներին և նշեց, որ տոնը ինչ-որ տեղ խթան է՝ հանրապետությունում զարգացնելու ֆիզիկական կուլտուրան և սպորտը:

Մասնագիտության ընտրության հարցում նրա համար օրինակ է ծառայել հայրը՝ Շուրիկ Ահարոնյանը, որը ֆիզկուլտուրայի լավագույն մասնագետ էր: Ուսանողական տարիներին նա միակն էր Արցախից, որ երևանի պետական

համալսարանի ՆԶՊ և ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետի լողի բաժինն է ընդունվել ու ավարտել:

Ղ. Ահարոնյանի սերը ֆիզկուլտուրայի հանդեպ հորից է փոխանցվել: Հոր կամոք Ղաթիբը մշտապես զբաղվում էր սպորտով: Շուրիկ Ահարոնյանը 43 տարվա մանկավարժական ստաժ ունի. 10 տարի Սոսի դպրոցի տնօրենն է եղել:

Ղ. Ահարոնյանի մասնագիտության ընտրության հարցում դրական օրինակ է ծառայել նաև նրա ֆիզկուլտուրայի ուսուցիչը՝ Արամ Բալայանը, որին շատ սիրելի ու միշտ ցանկացել է սնանել: Ղ. Ահարոնյանն իր ուսուցչի իրավահաջորդը եղավ: Նրա թոշակի անցնելուց հետո անմիջապես և առայսօր շարունակում է նրա գործունեությունը:

Ղ. Ահարոնյանը խոստովանում է, որ իր սիրելի ուսուցիչ Արամ Բալայանը շատ հաջողությունների է հասել իր գործունեության ընթացքում: Այսօր ճիշտ իր ուսուցչի նման Ղաթիբն է շարունակում պարբերաբար հաջողություններ գրանցել սպորտի ոլորտում:

Նա իր մարզիկների հետ միշտ մասնակցում է Արցախի, Հայաստանի հանրապետություններում անցկացվող բոլոր մարզական միջոցառումներին և միշտ առաջնակարգ տեղեր գրավում, հիմնակա-

նում՝ առաջին տեղ:

2007թ. Արցախում մեկնարկել է «Լավագույն մարզական ընտանիք» առաջնությունը: Ղ. Ահարոնյանի ընտանիքն այն բացառիկներից է, որն ամեն տարի մասնակ-



ցում է այս առաջնությանը, գրավում առաջին մրցանակային տեղը շրջանում և Արցախի Հանրապետությունում՝ հասնելով եզրափակիչ փուլ (Հայաստանի Հանրապետություն):

Մեր հերոսն արժանացել է բազմաթիվ մրցանակների՝ ԼՂՀ Ազգային ժողովի և տարբեր գավաթներ-

ի, մեդալների, պատվոգրերի, դրամական պարգևների ու արժեքավոր նվերների: Ապացույցը նրա աշխատանքային գրասենյակն է:

Մարզաշխարհում գրանցած հաջողությունները նա համարում է պետության վարկանիշի բարձրացման փայլուն գրավականներից: Ասում է՝ հզոր հայրենիք կերտելու գործում կարևոր է ունենալ առողջ սերունդ:

Ղ. Ահարոնյանն իրականացնում է ամենօրյա ճիշտ գործունեություն. արդյունքում դաստիարակվում է հոգով ու մարմնով առողջ, հայրենասեր սերունդ, որը կպաշտպանի իրենց հայրերի արյան գնով ձեռք բերված անկախ երկիրը: Հավաստում է, որ ֆիզիկական դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի սովորողի անձի ձևավորման, նրա ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեհամակարգի ձևավորման գործում:

Ջրուցակիցս նշում է, որ ֆիզկուլտուրան զարգացող ուղիտ է, որը պահանջում է նվիրված ու հետևողական աշխատանք:

Ֆիզիկական կուլտուրան ու սպորտն իմ կենսակերպն է, իմ առօրյայի հիմնական, բաղկացուցիչ մասը: Ես ապրում եմ սպորտում ու իմ ասների գրանցած հա-

ջողություններով, որոնք ոգևորում ու ավելի են բարձրացնում պատասխանատվության զգացումս և ստիպում օր օրի ավելի ջանասիրաբար ու ստեղծագործաբար աշխատել, - ասում է նա:

Ճիշտ են ասում՝ ուսուցչի գնահատականը տալիս է աշակերտը: Այսօր Ղ. Ահարոնյանի աշակերտները փոխհատուցում են նրան. տարբեր մարզաձևերում հաղթանակներ են գրանցում՝ մեծ ուրախություն ու հպարտություն պարգևելով սիրելի ուսուցչին:

Նա ուշադրության կենտրոնում է պահում բոլոր աշակերտներին: Դասաժամերը հազեցած են ծրագրով նախատեսված մարզաձևերով:

Ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի հանդեպ սերն ու նվիրվածությունը գեներացնում փոխանցվում են սերնդեսերունդ. Ղ. Ահարոնյանի որդին՝ Սմբատ Ահարոնյանը, ԱրՊՀ-ի ՆԶՊ և ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետի արևմտաօրենս վերջին կուրսի ուսանող է:

Մեր գրույցի վերջում Ղ. Ահարոնյանը նորից ջերմորեն շնորհավորեց Արցախի ֆիզկուլտուրնիկներին մասնագիտական տոնի առթիվ, մաղթեց խաղաղություն, առողջություն, բոլոր մարզաձևերի զարգացում ու մասապականացում Արցախում, հետապա հաղթանակների ու ձեռքբերումների արձանագրում բոլոր մարզաձևերից:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՏԵՐ ԱՐՅԱՆՈՒՄ



Վերջին տարիներին Արցախում սկսել են ակտիվ զարգանալ և արդիական բնույթ կրել խառը մենամարտերը: Իսկ պրոֆեսիոնալ մենամարտերի պարբերաբար անցկացումը կխթանի մարզիկների պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը և ծանապարհ կրթացի դեպի պրոֆեսիոնալ շինք:

Սեպտեմբերի 15-ին Ստեփանակերտի «Վալենթ Գարդեն» համալիրի մարզադաշտում կայացավ Արցախում նախադեպը չունեցող՝ HayFC (Hayastan Fighting Championships) կազմակերպության առաջին պրոֆեսիոնալ մրցաշարը, որին մասնակցեցին 28 լավագույն մարզիկ Արցախի և Հայաստանի հանրապետություններից: MMA, K-1 և բռնցքամարտ մարզաձևերից անցկացված 14 պրոֆեսիոնալ մենամարտ դիտելու էին եկել երկրի Նախագահը, ԿԳՍ նախարարը, պաշտոնատար անձինք, հյուրեր, մարզասերներ, թե՛ պայքարի երկրպագուներ: Բարձր մակարդակով և տաք կրքերի մթնոլորտում կայացած մրցաշարի արդյունքներն ամփոփեցինք HayFC կազմակերպության հիմնադիր, Արցախի մարտարվեստների ասոցիացիայի նախագահ և մարզիչ Գարեգին ԱՂԱԲԱԼՅԱՆԻ հետ:


- Գարեգին, նախ կցանկանալի՞նք ինձնալ, թե՛ ինչ նպատակ ունի Ձեր կողմից նոր կազմակերպության հիմնադրումը:

- Նպատակը սպորտի զարգացումն ու մասսայականացումն է Արցախում, ինչպես նաև մարզիկների պրոֆեսիոնալիզմի բարձրացումն ու ուղղորդումը դեպի պրոֆեսիոնալ շինք: Յուրաքանչյուր պրոֆեսիոնալ պարապող մարզիկի նպատակն է հասնել պրոֆեսիոնալ շինք: Արցախում պրոֆեսիոնալ մարտերի պակաս կա: HayFC կազմակերպության միջոցով հնարավոր կդառնա ապահովել մարզիկների մասնակցությունը հանախակի կազմակերպվող մրցաշարերի, ինչն էլ կխթանի նրանց մասնակցությանը նաև միջազգային պրոֆեսիոնալ առաջնությունների,

ինչպես, օրինակ, UFC կամ GLORY կազմակերպությունների մրցաշարերին:

- Ո՞ր մարզիկներն էին ընդգրկված մասնակցելու HayFC-1 մրցաշարին Արցախում:

- Ընդգրկված էին MMA, K-1 և բռնցքամարտ մարզաձևերով պարապող առաջատար մարզիկներ: Մեկ մենամարտ անցկացվեց բռնցքամարտ մարզաձևից: K-1-ով չորս մենամարտ անցկացվեց, իսկ MMA-ով՝ ինը մենամարտ: Բռնցքամարտի մարզիչ Գևորգ Թորոսյանի և K-1 ու մուայթայի մարզիչ Ալեքսան Աղաբալյանի, ինչպես նաև իմ սաները, որոնք ներկայացնում էին Արցախը, կարողացան փայլուն հաղ-



թանակներ արձանագրել: Նշեն, որ մրցագորգ էին դուրս եկել իրենց մարզաձևում բավականին հաջողությամբ:

թյունների հասած մարզիկներ: Մեր սաները հաղթողի կոչման համար պայքարում հանդիպեցին «պինդ» տղաների: Նախքան մրցաշարն սկսելն առանձնացված էր երկու մենամարտ: Ովքեր առիթ են ունեցել դիտել մարտերը, միանշանակ տպավորված են K-1 մարզաձևից Դավիթ Հայրապետյանի ընդդեմ Գոռ Բաբայանի մարտով, որտեղ արցախցի Դավիթ Հայրապետյանը մեկ ռաունդով հաղթեց մրցակցին և MMA մարզաձևից Թաթուլ Ավագյանի (78կգ) ընդդեմ Աղվան Հակոբյանի մենամարտով, որտեղ նույնպես Արցախը ներկայացնող Թաթուլ Ավագյանը հաղթեց երեք ռաունդ տևած մարտում: MMA մարզաձևով 9 մենամարտից 4-ը ճանաչարի ելան դեպի HayFC շրջանակներ, որտեղ մենամարտեցին 16 ու 17 տարեկան մարզիկներ, իսկ ամենափոքր մասնակիցը 15-ամյա Էդուարդ

Կուն պրոֆեսիոնալ մենամարտերի անցկացումն Արցախում:

- Ինչպես արդեն նշվեց, դա մեր նպատակն է: Կարծում եմ՝ HayFC-1 մրցաշարն անցավ բարձր մակարդակով, որի մասին վկայում են ինչպես Youtube-ով հետևող արտասահմանյան մեր գործընկերների, այնպես էլ այստեղից ստացվող դրական արձագանքները: Ստեփանակերտում արդեն սպասում են HayFC-2 մրցաշարին, որը նախատեսում ենք անցկացնել դեկտեմբերին: Իսկ 2020-ին ծրագրավորում ենք Ստեփանակերտի մարզադաշտում կազմակերպել «Հայերն ընդդեմ աշխարհի» անվանումով HayFC-3 պրոֆեսիոնալ առաջնություն՝ մասնակցությամբ ավելի շատ մարզիկների:

- Նման խոշոր ու ծախսատար մրցաշարերը կազմակերպել առանց ֆինանսական աջակցության հավանաբար հնարավոր չէր լինի: Ովքե՞ր են ձեր աջակիցները:

- Կցանկանալի առանձնահատուկ շնորհակալություն հայտնել Կոմիտաս Կարապետյանի Արցախում սպորտի զարգացմանը նպաստելու և հովանավորության համար, ինչպես նաև «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին և «Ապագա սերունդների հիմնադրամի» կառավարիչ Գ.Պարիսյանցի աջակցության համար:

ԿԻՈՎՈՒՇԻՆ ԿԱՐԱՏԵԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՆՎԱՃԵԼ ԵՆ ԴԻԶԱՓԱՅՏԻ ԲԱՐՁՈՒՆԵՐԸ

Արցախի աշխարհը հարուստ է գորավոր վանքերով ու սրբատեղիներով, պատմամշակութային կոթողներով, որոնցից յուրաքանչյուրն իր պատմությունն ու դերն ունի հայոց աշխարհում: Բայց Կատարո վանքն առանձնանում է ոչ միայն իր գորությանը, խորհրդավորությանը ու բարձրությանը, այլև դեպի իրեն տանող՝ ժայռերի միջով անցնող գլխապտույտ ոլորաններով ու դժվարանց նեղ կածաններով, որտեղ բարձրանալու դժվարությունը կիոկուշինի մարզիչները համեմատում են մարտի հետ, որում նույնպես պետք է վստահ լինել սեփական ուժերին ու մինչև վերջ պայքարել՝ դրսեւորելով կամքի ուժ ու դիմադրողականություն: Այս հատկություններն անրապնդելուն, ինչպես նաև Արցախի հրաշալիք Կատարո վանք այցելելուն եւ առ Աստված աղոթք ուղղելուն էր միտված սեպտեմբերի 14-ին Կիոկուշին կարատե դո ֆեդերացիայի մարզիչների ու մարզիկների կազմակերպած արշավը:...



չինությունների, պարսպապատերի ավերակները, որոնք էլ ավելի են կարեւորում այդ նշանավոր սրբավայր-ուխտատեղիի դերը տարածաշրջանում:

Պատմական աղբյուրների վկայությամբ ժայռը սրբացված է եղել վաղնջական ժամանակներից, իսկ ուխտագնացության մասին հիշատակությունները վերաբերում են դեռևս արաբական, գուցե եւ ավելի վաղ ժամանակներին: Ըստ ավանդության, սարի զագաթին, հինավուրց Կատարո վանքի տեղում, 330-ականներին նահատակվել են մագթթաց արքա Սանեսանի զավակներն ու բազմաթիվ քրիստոնյաներ, որոնց դարձի էր բերել Ս. Գրիգոր Լուսավորչի թողած՝ Արցախ աշխարհի առաջին եպիսկոպոս Ս. Գրիգորիսը: Նորահավատներին դիզել են

ինչպես փայտը եւ այրել, այստեղից էլ առաջացել է լեռան անվանումը: 4-5-րդ դարերում լեռան կատարին կառուցվել է Կատարո վանքը: Պատմաբան Լեոն գրում է, որ այն եղել է Դիզակ գավառի առաջնորդանիստը: Բուն հուշարձանը վերակառուցվել է, եւ դատելով տեղում պահպանված խաչքարերի մնացորդներից՝ վերաբերում է 17-րդ դարին: Լեռնագագաթից երեւում են Արցախի (Մուղանքի) դաշտավայրը, Իրանի սահմանը՝ Արաքսի հովիտը, Ձանգեզուրի լեռնաշխարհը, Մոզլի կատարները, իսկ հյուսիսային կողմում Հարոս լեռնաշղթան է:

Իրոք, հրաշքի են նման վեհափստ լեռան զագաթին գտնվող եկեղեցին եւ շրջապատող անխաթար բնությունը, որոնք անտարբեր չեն թողնում եւ անկրկնելի հմայքով գերում են բոլոր նրանց, ովքեր գեթ մեկ անգամ լինում են այս հնամյա

ժամ տեւած ոտքի ծանապարհը գաղթափով եթե անգամ հոգնեցրել էր նրանց, ապա ուխտատեղիում ստացած լիցքերը կարող էին ուժ միայն տալ՝ կատարելու կիոկուշինի հետաքրքրաշարժ հնարների համակարգը՝ կատան:

Մարզիչ Սասուն Բրուսյանը, մեզ հետ կիսվելով իրենց լեռնագնացության դրական տպավորություններով, պատմեց, որ մարզիկների հետ տեղում անց են կացրել ինչպես մարզաձևից հատուկ պարապմունք, այնպես էլ հայոց պատմությանը վերաբերող եւ մարզիկների հոգեբանության ճիշտ զարգացմանը նպաստող դասեր: Սակայն կրկին բարձրացվեց մեզ հուզող թեմաներից մեկը, որն անտարբեր չէր թողել նաեւ մարզիկներին: Տեղանքում կենցաղային աղքի մնացորդներ ու կույտեր կային, որ հասարակության մի գանգավածի անվայել պահվածքի հետեւանքն է: Ս. Բրուսյանի համոզմամբ՝ նման տիպի երեւույթի կանխումը պետք է սկսել երեխաների մեջ շրջակա միջավայրի, առավել եւս, սրբավայրերի հանդեպ մաքրության պահպանման սկզբունքներ սերմանելով: Կիոկուշինի խումբը Կատարո վանքի տարածքում արագորեն աղբահավաքում եւ աղբահանում կատարեց: Նպատակ ունեն արշավներն ավանդական դարձնել եւ որպես օրինակ իրենց եւ ուրիշների՝ պարտադիր շաքաթօրյակներ մտցնել դրանց ծրագրի մեջ:

Առաջնորդվելով իրենց մարզաձևի նշանաբանով՝ վստահություն, նպատակասլացություն, կամք, կիոկուշին կարատեի մարզիչներն ու մարզիկները շարունակում են մարզաշխարհը հագեցնել ոչ միայն հերթական անգամ չենպիտոն դառնալու լուրերով, այլև աստվածահաճո եւ մարդահաճո արարքներով, բարձր մակարդակի իրենց կազմակերպվածությամբ: Ցանկանում ենք հաջողություն հետագա գործունեության մեջ:

Սոկյա ԱՎԱԳՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԱՏԵՐԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՆՎԱՃԵԼ ԵՆ ԴԻԶԱՓԱՅՏԻ ԲԱՐՁՈՒՆԵՐԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 20.09.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: